AZG NEW PDF.qxd 20/07/2010 22:25 Page 1

Azg Ազգ

21 ՅՈՒԼԻՍ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 135 (4515)

ISSN: 1829-1651

Մոսկվայում քննարկվել է ԼՂ հարցը

Մոսկվայում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները եւ ՌԴ ԱԳ փոխնախարար Գրիգորի Կարասինը քննարկել են ԼՂ խնդիրը: Կարասինը հանդիպել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Բեռնար Ֆասիեին (Ֆրանսիա), Ռոբերտ Բրադկեին (ԱՄՆ), Իգոր Պոպովին (Ռուսաստան) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին, որոնք Մոսկվայում աշխատանքային խորհրդակցություններ են անցկացնում:

Ինչպես նշվում է ՌԴ ԱԳՆ-ի տարածած հաղորդագրության մեջ, «Զրույցի ընթացքում քննարկվել են ԼՂ խնդրին վերաբերող արդիական խնդիրներ»: Ռուսաստանի ԱԳ նախարարի հանձնարարությամբ Կարասինը ֆիանսիացի համանախագահ Ֆասիեին կրճատաբար է տվել «Միջազգային համագործակցության մեջ ներդրման համար»:

ԵԱՀԿ Մինսկի խումբը հավասարության նշան է դնում հայկական եւ ադրբեջանական կողմերի միջեւ

Մոռանալով, որ պատերազմում Ադրբեջանը պարտված կողմն է, իսկ ադրբեջանցին՝ հայ սպանելու համար մարդասպանին ազգային հերոս հռչակող ստահակ

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, հուլիսի 17-ին Ալմաթիում հրավիրված ԵԱՀԿ-ի երկրների ԱԳ-ի նախարարների գագաթաժողովի շրջանակներում հանդիպեցին Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարները: Հակառակ **Էլմար Մամեդյարովի** պնդումներին, թե հանդիպմանը քննարկվելու է «Քելբաջարի եւ Լաչինի շրջանները առաջիկա հինգ տարում Ադրբեջանին վերադարձնելու ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկը», որը բացարձակ սուտ էր համարել **Էդվարդ Նալբանդյանը**, վերադարձնելու հարց չի քննարկվել, առավել եւս՝ առաջարկի, քանի որ այդպիսի առաջարկ չի եղել:

Այս փաստը անուղղակի, բայց եւ այնպես ափսոսանքով հաստատեց նաեւ Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն, որը Նալբանդյան-Մամեդյարով հանդիպումից հետո առանձնազրույց էր ունեցել Ադրբեջանի արտգործնախարարի հետ: Խնդիրը, սակայն, Դավութօղլուի ափսոսանքը չէ, այլ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների՝ Ռուսաստանի եւ Ֆրանսիայի արտգործնախարարներ Սերգեյ Լավրովի եւ Բեռնար Կուշների, ինչպես նաեւ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ջեյմս Ստայնբերգի՝ խնդրո առարկա հանդիպմանը հաջորդած համատեղ հայտարարությունը:

«**Ազգ**»-ը երեկ մանրամասն անդրադարձել է Մինսկի խմբի հայտարարությանը, որտեղ կրկին հիշեցվում է ղարաբաղյան հակամարտությունը Հելսինկյան եզրափակիչ ակտի՝ պետությունների տարածքային ամբողջականության, հավասար իրավունքների եւ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքների հիման վրա լուծելու կողմերի ստանձնած միջազգային պարտավորությունները, ընդգծվում էր, որ 2009-ի հուլիսի 10-ին Լ'Ակվիլայում Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի նախագահների ձեւակերպած եւ ս. թ. հունիսի 26-ին Մոսկվայում վերահաստատված տարրերը պետք է լինեն հակամարտության «արդար եւ երկարատեւ կարգավորման հիմքը», բացառվում է ուժի կիրառումը, ավելի փոխզիջող լինելու կոչ է արվում կողմերին, միաժամանակ մատնանշվում է, որ համանախագահող երկրները հակամարտության կարգավորման ճանապարհին ընդամենը աջակցում են կողմերին, կարգավորմանը պետք է հասնեն Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդները, իսկ կարգավորումը, իհարկե, չպետք է մթագնի «հավասարակշռված լուծման» հեռանկարը:

Տես էջ 8

ԱԺ նախագահն այսօր ելույթ կունենա խորհրդարանների նախագահների համաշխարհային համաժողովում

Ըստ ԱԺ լրատվական ծառայության՝ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը հուլիսի 19-ին Ժնեւում մասնակցել է խորհրդարանների նախագահների համաշխարհային երրորդ համաժողովին, որին շուրջ 150 երկիր է ներկայացված, 102 խորհրդարանների նախագահներ էլ ելույթ պետք է ունենան: Այսօր սպասվում է Հ. Աբրահամյանի ելույթը: Հաղորդվում է, որ Հ. Աբրահամյանը հանդիպումներ է ունեցել Կիպրոսի Ներկայացուցիչների պալատի նախագահ Մարիոս Կարոյանի, Ադրբեջանի խորհրդարանի նախագահ Օկտայ Ասադովի, Իրանի Իսլամական Հանրապետության Մեջլիսի նախագահ Ալի Լարիջանիի հետ (նրա հանդիպումների ոչ լրիվ ցանկն է-Մ.Խ.): Մասնավորապես, ըստ ԱԺ կայքի, Ադրբեջանի խորհրդարանի նախագահի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են արցախյան հիմնախնդրի կարգավորման եւ երկու խորհրդարանների համագործակցությանը վերաբերող հարցեր (ավելին չի ասված-Մ.Խ.), իսկ ԻԻՀ Մեջլիսի նախագահ Ալի Լարիջանիի հետ հանդիպման ժամանակ կողմերը կարեւորել են միջազգային կառույցներում համագործակցությունը եւ երկուստեք նշել, որ տարածաշրջանային հակամարտությունների եւ ճգնաժամերի ընթացքում Հայաստանի եւ Իրանի իշխանություններն աչքի են ընկել հավասարակշռված եւ շրջահայաց մոտեցումներով: Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել հայ-թուրքական հարաբերություններին եւ ԼՂ հիմնախնդրին: Երկու խորհրդարանների նախագահները շեշտել են, որ տարածաշրջանային անվտանգության եւ կայունության համար հակամարտությունները պետք է լուծվեն խաղաղ, բանակցային ճանապարհով:

Մ. Խ.

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Մեթյու Բրայզայի թեկնածության քննարկումը՝ հուլիսի 22-ին

Իսկ մինչ այդ՝ Ֆրենսիս Ռիկարդոնե

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը հուլիսի 22-ին կքննարկի Ադրբեջանում Միացյալ Նահանգների դեսպանի պաշտոնում Մեթյու Բրայզայի թեկնածության հարցը: Սենատի պաշտոնական կայքէջի համաձայն, քննարկումները տեղի կունենան սենատոր Շահինի նախագահությամբ:

«**Ազգն**» արդեն ներկայացրել է, որ Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը (ANCA) ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամներին էր ուղարկել 7-էջանոց մի փաստաթուղթ, որտեղ որոշ բացահայտումներ են արված Մեթյու Բրայզայի քաղաքական անցյալի վերաբերյալ: Սենատի հանձնաժողովի 19 անդամներին ANCA-ի նախագահ **Քեն Խաչիկյանը** ներկայացրել է, որ Ամերիկայի հայկական համայնքը մտահոգված է Բրայզայի թեկնածության առաջադրմամբ, քանի որ «ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկյան համանախագահ եղած ժամանակ Բրայզան դրսեւորել է կողմնակալ դիրքորոշում, հայկական կողմին ենթարկել է որոշակի ճնշումներ եւ ջանքեր է գործադրել Հայաստանում ԱՄՆ նախկին դեսպան Ջոն Էվանսին պաշտոնաթող անելու ուղղությամբ»:

Բացի այս՝ Հայ դատի հանձնախումբը սենատորների ուշադրությունն էր հրավիրել Բրայզայի կնոջ՝ Ջեյնո Բարանի գործոնին. «Բարանն իր մասնագիտական գործունեությամբ ազդել է ամուսնու քաղաքական գործունեության վրա», նշված էր փաստաթղթում: ANCA-ն նաեւ իր պաշտոնական կայքում ստորագրահավաք էր կազմակերպել՝ ուղարկելու Սենատ՝ որպես բողոքի ակցիա:

Տես էջ 8

Հայոց ցեղասպանությունն ու Հոլոքոսթը՝ պարտադիր ուսուցման նյութ

Ինչպես փոխանցում է News.am-ը, հայկական եւ հրեական ցեղասպանությունները պետք է պարտադիր ուսուցման նյութ լինեն Արգենտինայի Կորդոբա քաղաքի պետական վարժարաններում: Սրա վերաբերյալ Կորդոբայում համաձայնագիր է ստորագրվել INADI-ի (խտրականության, օտարատյացության եւ ցեղապաշտության դեմ ազգային ինստիտուտ) Կորդոբայի քաղաքապետարանի, ՀՅԴ Հարավային Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի եւ հրեական կազմակերպությունների համախմբման Կորդոբայի մասնաճյուղի միջեւ:

Ըստ համաձայնագրի, քաղաքի ուսուցչական կազմին՝ նշված նյութերի մասով օժանդակելու համար կստեղծվի հանձնախումբ: Հանձնախումբը պարբերաբար կկազմակերպի սեմինարներ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ եւ այլ տեսակի միջոցառումներ, Հայոց ցեղասպանության եւ հրեաների ողջակիզման մասին նյութերի էլ ավելի լայն տարածման համար:

Ըստ ՀՅԴ Հարավային Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի Կորդոբայի մասնաճյուղի տնօրեն Էդուարդո Թորոսյանի՝ առաջիկայում նմանատիպ համաձայնագիր կստորագրվի Կորդոբայի պետական համալսարանի հետ, որի համաձայն՝ 2011 թվականից համալսարանի ավելի քան 20.000 դիմորդների քննաշարում պարտադիր լինելու են նաեւ Հայոց ցեղասպանության եւ հրեաների ողջակիզման նյութերը:

Կորդոբայի պետական համալսարանը Արգենտինայում հիմնված առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունն է եւ ուսանողության քանակով համարվում է երկրի երկրորդ բուհը:

Հ. Ա.

ՀԱՊԿ արագ արձագանման ստորաբաժանումների զորավարժությունները կարող են անցկացվել Հայաստանում

ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի հունիսյան նստաշրջանի միջոցառումների պլանն իրագործվում է ըստ սահմանված ժամանակացույցի: Հայաստանի մասով միջոցառումները կատարվել են ամբողջությամբ: Սա փաստել է Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար **Արթուր Բաղդասարյանը** հուլիսի 20-ին Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմում ՀԱՊԿ գլխավոր քարտուղար **Նիկոլայ Բորդյուժայի** գլխավորած պատվիրակության հետ կոնսուլտացիաների ընթացքում:

«Հինգ թեմատիկ ուղղություններով շուրջ 6 տասնյակ միջոցառումների իրականացման հարցերով զբաղվում է ստեղծված միջգերատեսչական հանձնախումբը: Միջոցառումների պլանի իրագործումը Հայաստանի նախագահի ուշադրության կենտրոնում է»,- ասել է Արթուր Բաղդասարյանը:

Կողմերը քննարկել են օգոստոսին Երեւանում կայանալիք ՀԱՊԿ ոչ պաշտոնական գագաթնաժողովի օրակարգի հետ կապված հարցեր:

Անդրադարձ է եղել նաեւ ՀԱՊԿ արագ արձագանման ստորաբաժանումները ժամանակակից զինտեխնիկայով ապահովելու խնդրին: Քննարկվել է նաեւ նշված ստորաբաժանումների զորավարժությունները 2011 թվականին Հայաստանում անցկացնելու հարցը:

Տես էջ 2

AZG NEW PDF.qxd 20/07/2010 21:44 Page 1

ԱԶԳ

Ընթացիկ

Մարտունու շրջանի 30.000 բնակիչ կմնան առանց ջրի

Պատճառը Գայլաշոր վտակի վրա կառուցվող ՀԷԿ-ի շինարարությունն է

Թվում է՝ իշխանությունները մոռացել են, թե 90-ականներին ինչ դեր էր խաղում Սեւանա լիճը ու ինչպես էր շաբաթական 5 անգամ սեղանին դրվում ձկով ճաշատեսակ: Մոռացել են, որ հենց այդ ձկան շնորհիվ 90-ականների ցուրտ ու մութ տարիներին մարդիկ սովից չմեռան: Բայց մարդիկ հիշում են լավ բաներն այն ժամանակ, երբ դա իրենց ձեռք է տալիս, ու հիմա այն տղավորությունն է, որ կառավարությունն ու հատկապես բնապահպանության նախարարությունը կարծես նպատակադրվել են Սեւանը հիմնովին վերածել ճահճի: Ջերմուկի կոյուղաջրերը լցվում են Կեչուտի ջրամբար, այնուհետեւ՝ Սեւանա լիճ, բայց նախարարությունը ոչինչ չի ձեռնարկում: Լճի մակարդակի բարձրացմանը զուգահեռ շրջակայքի անտառները չեն մաքրվում, ու արմատներն անցնում են ջրի տակ, բայց նախարարությունը կրկին ձեռքերը ծալած նստում է: Լճում ձկնատեսակները վերանում են, որովհետեւ ջուրն անորակ է եւ կեղտոտ:

Արգիճի գետի Գայլաձոր վտակը լիճ լցվող ամենաերկար եւ հորդառատ գետերից է եւ եզակիներից, որ նպաստավոր պայմաններ է ստեղծում անհետացման եզրին գտնվող իշխան եւ կողակ տեսակի ձկների ձվադրման համար:

Սակայն, արդեն մի քանի ամիս Արգիճի թափվող Գայլաձոր վտակի վրա ընթանում է շինարարություն. վտակը Վայոց ձորի մարզ են թեքում ՀԷԿ կառուցելու համար, ինչի հետեւանքով՝ բացի բնապահպանական եւ կենդանական աշխարհին հասցվող վնասից, Գեղարքունիքի մարզի 5 համայնքներ՝ Գեղհովիտ, Մադինա, Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն եւ Վաղաշեն, կզրկվեն խմելու եւ ոռոգման ջրից: «Սեւան ազգային պարկ»-ի գլխավոր հատակագծի հեղինակ **Գագիկ Սուխուդյանի** ներկայացմամբ՝ Արփա-Սեւան, Որոտան-Կեչուտ ջրամբարներ են կառուցում, միջոցներ ծախսում Սեւանի մակարդակի բարձրացման համար, մյուս կողմից՝ Սեւանի ջուրը տանում են անհայտ նպատակներով օգտագործելու:

Բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության պետի տեղակալ **Կարեն Պապոյանն** էլ «Հայելի» մամուլի ակումբում հերքեց տեղեկությունը, թե գետի վտակը թեքվում է ՀԷԿ կառուցելու համար: «Գետի հունը թեքելու մասին խոսք լինել չի կարող», հայտարարեց նա: Նրա ներկայացմամբ խորհրդային ժամանակներում Վայոց ձորի մարզի Աղնջաձոր համայնքի շուրջ 270 հեկտար հողատարածքը հնարավոր չէր ոռոգել, հետեւաբար կառուցվել է Գայլաձոր վտակից դեպի նշված համայնքը տանող ջրատարը: 2009թ. ջրի կորուստները նվազեցնելու նպատակով համայնքի ավագանին դիմել է «Զանգեզուր Էխիմդ» ՍՊԸ-ին՝ նշված ջրատարի խողովակները փոխելու համար, քանի որ 50-ականներին անցկացված ազբեստե խողովակներն արդեն քայքայված են: Նախարարության միջամտությամբ ջրատարի խողովակների փոփոխման գործընթացը կասեցվել է: Նրա մեկնաբանությամբ՝ վերոնշյալ տարածքում շինարարական աշխատանքներ չեն իրականացնում՝ մինչեւ հայտնի կդառնան խողովակները փոխելու ուղղությամբ իրականացվող համապատասխան փորձաքննության արդյունքները:

Մինչդեռ «Արմա» ակումբում Մարտունու վերոնշյալ 5 համայնքի բնակիչներն ու դեպքի վայր այցելած բնապահպաններն այլ բան էին փաստում: Հինգ շրջանի 300 բնակիչ օրերս մի քանի ժամ շարունակ փակել էին Երեւան-Սեւան-Մարտունի մայրուղին՝ պահանջելով դադարեցնել ՀԷԿ-ի շինարարությունը: Բողոքի ակցիայի մասնակից տիկին **Պայծառ Աղաբաբյանը** պատմում է, որ մարզպետարանը խնդրել է 10 օր ժամանակ՝ խնդրին տեղեկանալու եւ հարցերը կարգավորելու համար: «Գեղարքունիքի մարզում շինարարությունն ավարտվել է, կառուցվել է 3 կմ երկարությամբ կամար: Շրջակայքը բետոնապատվել է, խողովակներ են ամրացնում: Այժմ շինարարությունն ընթանում է Վայոց ձորում», ասաց նա:

Մարտունու 5 համայնքների բնակչությունը կազմում է շուրջ 30.000: Հիմնական զբաղմունքը հողագործությունն է: Տիկին Պայծառի հավաստմամբ՝ կոռոզիայի պայմաններում գյուղացին մշակում է հողի ընդամենը 30 տոկոսը: Սակայն եթե ոռոգման եւ խմելու ջուր չլինի, գյուղացին իր կաղամբն ու կարտոֆիլն էլ չի կարողանա մշակել: «Ո՞ւր գնանք, ինչ անենք: Այս ջուրը 30.000 գյուղացու կյանքն է, միակ աղբյուրը: Ես վաղը որդի եմ ուղարկելու բանակ, այսօր նրան ինչո՞վ եմ պահելու: Արդյո՞ք մեզ հարկավոր են սոված զինվորներ: Ինչու են մեր հաշվին ուրիշները հարստանում», բարկանում է նա:

ԱԺ բնապահպանական հարցերով հանձնաժողովի նախկին նախագահ **Գագիկ Թադեւոսյանի** ներկայացմամբ՝ ՀԷԿ-ի կառուցումը խախտում է «Սեւանի մասին», «Անապատացման դեմ պայքարի» եւ «Ջրային օրենսգրքի» մասին օրենքները: «Սեւանը մեր միակ հարստությունն է: Սեւանից են սնվում հանրապետության 60-70 % ջրաղբյուրներ: Տարիներ առաջ, երբ լճի մակարդակն իջել էր, Բջնիի աղբյուրները ցամաքեցին: Ինչ է մտածում այս կապակցությամբ նախագահին առընթեր Սեւանի հարցերով հանձնաժողովը, ի՞նչ է մտածում Վլադիմիր Մովսիսյանը: Ինչո՞ւ է Սերժ Սարգսյանը ստեղծել այդ հանձնաժողովը, եթե նրանք լռում են», ասաց նա:

Բնապահպանները համոզված են՝ եթե ՀԷԿ-ը կառուցվի, կասկածի տակ կդրվի 30.000 բնակչի այնտեղ ապրելու հնարավորությունն ու արտագաղթը կդառնա անխուսափելի: Գյուղացիները սպասում են մարզպետի եւ բնապահպանության նախարարի պատասխաններին: Նրանք հավելում են, որ պայքարելու են մինչեւ վերջ, որպեսզի ՀԷԿ-ի ապօրինի շինարարությունը ապամոնտաժվի:

Թե ով է տրամադրել թույլտվություն, կամ որ օլիգարխը կամ պատգամավորն է (թեպես մեր իրականության մեջ այս երկու բառերն արդեն դարձել են հոմանիշներ-Հ.Հ.) սեփականատերը՝ հայտնի չէ: Խախտվում է նաեւ հանրային սեփականություն տարածքների վերաբերյալ հասարակությանը տեղեկատվություն տրամադրելու օրենքը:

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նոտարական կոռուպցիայի վերացմանն ուղղված մեր առաջարկները

Հուսով ենք՝ գործնական եւ անաչառ մոտեցման կարժանանան

«Կրկին նոտարական կոռուպցիայի մասին» («**Ազգ**», 6 հուլիսի 2010թ.) մեր հրապարակմանն ի պատասխան արդարադատության նախարարությունից ստացանք եւ հրապարակեցինք «Նոտարիատի բարեփոխումների մասին» պատասխան-պարզաբանումը: Դրական համարելով պետական մարմինների նման օրենսդրական արձագանքը մեր հրապարակմանը, միաժամանակ, այդ պատասխանի նկատմամբ որոշ վերապահումներ կատարելու անհրաժեշտություն ենք տեսնում:

Նախարարության պատասխանում պաշտոնապես հայտարարվում է, որ չկա այս ոլորտի վերաբերյալ մի առաջարկ, որ ներառված չլինի իրենց ծրագրերում, եւ որ նախարարության առաջարկները մենք փորձել ենք ներկայացնել որպես սեփական առաջարկներ: Սակայն, մեղմ ասած, այդպես չէ: Պաշտոնական պարզաբանման մեջբերվող միջոցառումների ժամանակացույցում «Կրկին նոտարական կոռուպցիայի մասին» հոդվածում նշված մեր հիմնական առաջարկների վերաբերյալ գրեթե ոչինչ նշված չէ:

Հիշեցնենք վերոնշյալ հոդվածում մեր արած առաջարկները:

Առաջին առաջարկն այն էր, որ հարկ է սահմանել նոտարների կողմից գանձվող պետական տուրքի եւ ծառայության վճարների կոնկրետ չափեր: Այս առաջարկին է միայն անդրադարձել նախարարությունը, ասելով, որ նախատեսվում է «նոտարի մատուցած ծառայությունների սակագների փոփոխություն, այն հաշվարկով, որպեսզի նվազի սեփականությունից մինչեւ առավելագույն գումարի տարբերությունը»: Թերեւս բոլորին է հասկանալի, որ «կոնկրետ վճարների չափն» ու «գումարի տարբերության նվազումը» միանգամայն տարբեր բաներ են: Հույս ունենք, որ նախարարությունն ի վերջո կոնկրետ չափեր կսահմանի, ինչն ընդունված է նման կառույցներում: Ցանկալի է, որ մեր առաջարկը ներառվի նոտարիատի բարեփոխումների ծրագրում, քանզի կոնկրետ վճարների չափի դեպքում նվազում են կոռուպցիայի համար սողանցքերը:

Երկրորդ եւ առավել կարեւոր առաջարկն այն էր, որ պետտուրքի եւ ծառայության վճարները կատարվեն միայն բանկում՝ նոտարին ներկայացնելով վճարման անդորրագիրը, խստորեն արգելելով առձեռն վճարումը տեղում: Այս մասին, ցավոք, ընդհանրապես ոչինչ չի խոսվում արդարադատության նախարարության մեզ ուղղված պատասխանում: Մինչդեռ հենց այս ընթացակարգի բացակայությունն է բերում նոտարական կոռուպցիայի ամենալայն դրսեւորումներին:

Մեկ անգամ եւս ներկայացնելով այս առաջարկները, հուսով ենք, որ արդարադատության նախարարությունում սա կհամարեն «գործնական առաջարկ» եւ ինչպես խոստացել են պատասխանում՝ «անաչառորեն» ու նաեւ գործնականում կարձագանքեն դրանց, քանզի կարծում ենք, որ նախարարությունն իրոք ցանկանում եւ արդեն իրականացնում է մի շարք բարեփոխումներ այս ոլորտում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆ

Հայոսի եւ Քարթլոսի հուշարձանը՝ Նինոծմինդայում

Հուլիսի 16-18-ը Վրաստանում Հայաստանի դեսպան Հրաչ Սիլվանյանը աշխատանքային այցով եղել է Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում: Ըստ ԱԳՆ հաղորդագրության, այցի ընթացքում Հայաստանի դեսպանը հանդիպումներ է ունեցել Սամցխե-Ջավախքի նահանգապետ Լաշա Ճկադուայի, տեղական ինքնակառավարման նորընտիր մարմինների ղեկավարների հետ եւ քննարկել տարածաշրջանի տնտեսական, սոցիալական, մշակութային, մասնավորապես կրթական ոլորտին վերաբերող հարցեր:

Հուլիսի 17-ին Հայաստանյայց առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի եւ Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Բաբկեն աբդ. Սալիբյանի ուղեկցությամբ Հայաստանի դեսպանն այցելել է Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցի, ծանոթացել վերականգնողական աշխատանքների ընթացքին:

Նույն օրը դեսպան Սիլվանյանը Ախալքալաքի շրջանի Կարզախ գյուղում մասնակցել է հայ մեծանուն աշուղ Ջիվանուն նվիրված ավանդական տոնահանդեսին:

Հուլիսի 18-ին Հրաչ Սիլվանյանը եւ Սամցխե-Ջավախքի նահանգապետ Լաշա Ճկադուան Նինոծմինդայում հանդիսավորությամբ բացել են հայ-վրացական բարեկամությունը խորհրդանշող Հայոսի եւ Քարթլոսի հուշարձանը, որից հետո դեսպանը մասնակցել է նաեւ Նինոծմինդայի հիվանդանոց-պոլիկլինիկայի եւ շտաբ օգնություն-03 միավորման վերաբացման արարողությանը:

Նինոծմինդայի շրջանի Գանձա գյուղում դեսպան Սիլվանյանն այցելել է Վահան Տերյանի տուն-թանգարան, մասնակցել մեծ բանաստեղծի ծննդյան 125-ամյա հոբելյանին նվիրված տոնախմբությանը:

Ջավախքում կազմակերպված հանդիսություններին ու միջոցառումներին մասնակցում էին Հայաստանից ժամանած կառավարական եւ Հայաստանի գրողների միության պատվիրակությունները, հոգեւոր դասի ներկայացուցիչներ, Հայաստանի եւ Վրաստանի խորհրդարանների պատգամավորներ, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ, հայ եւ վրաց մտավորականներ, մշակույթի գործիչներ, հազարավոր ջավախքցիներ:

«Ազգի» կողմից ավելացնենք, որ Հայոսի եւ Քարթլոսի հուշարձանի բացումը շաս խորհրդանշական կերպով հետեւում է Վրաստանի նախագահի՝ Ադրբեջանին սիրո ձոներ նվիրելու հայտարարություններին, իսկ Ջիվանու եւ Վահան Տերյանին նվիրված ավանդական տոնակատարություններին ամեն տարի մասնակցում էր նաեւ, ասենք, Հայաստանի ԱԺ պատգամավոր, «Ջավախք» հայրենակցական միության ղեկավար Շիրակ Թորոսյանը, ում անվամբ վրացական իշխանությունները «սեւ ցուցակ» բացեցին՝ Վրաստան մուտքն արգելելու առումով:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՊԿ արագ արձագանման ստորաբաժանումների զորավարժությունները կարող են անցկացվել Հայաստանում

1-ին էջից

Կոնսուլտացիաներին հաջորդած մամուլի ասուլիսում Նիկոլայ Բորդյուժան նշել է. «ՀԱՊԿ արագ արձագանման ստորաբաժանումների զորավարժությունները մենք ծրագրում ենք անցկացնել հաջորդ տարի: Առաջարկ կա զորավարժություններն անցկացնել Հայաստանում: Կարծում եմ՝ դա միանգամայն իրական է»:

Ամփոփելով եռօրյա այցի արդյունքները՝ Նիկոլայ Բորդյուժան նշել է, որ ՀԱՊԿ շրջանակում ռազմատեխնիկական համագործակցությունն առաջնահերթություն է համարվում, ուստի իրականացվելիք պիլոտային ծրագիրը՝ Հայաստանում համատեղ ռազմարդյունաբերական ձեռնարկությունների ստեղծումը, թերեւս լավ արդյունքներ է ենթադրում:

«Մեր ձեռնարկությունների ղեկավարները ծանոթացան Հայաստանի ձեռնարկությունների հնարավորություններին, հետաքրքրվածություն կա, հուսով եմ՝ մոտ ապագայում կունենանք դրական արդյունքներ»,- ասել է Ռուսաստանի ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայության տնօրենի տեղակալ Կոնստանտին Բիրյուլինը:

«Առաջին անգամ ռուսական ռազմաարդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարների՝ նման ներկայացուցչական պատվիրակություն է ժամանել Հայաստան, նրանք մանրակրկիտ ուսումնասիրել են Հայաստանի ռազմարդյունաբերական համալիրի հնարավորությունները: Ռուս ձեռնարկատերերի կողմից համագործակցություն սկսելու տրամադրվածություն կա: Մոտ ապագայում սպասում ենք գործնական արդյունքների»,-ամփոփել է Արթուր Բաղդասարյանը:

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի քարտուղար

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 20/07/2010 21:07 Page 1

Տնտեսություն

2010-ի առաջին կիսամյակում 6,7 տոկոս տնտեսական աճ

Նկատելի աճ տնտեսության իրական հատվածում

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2010-ի հունվար-հունիս ամիսների օպերատիվ սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական աճը կազմել է 6,7 տոկոս: Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է մոտ 1 տրիլիոն 332 միլրդ դրամ: Նախորդ՝ հունվար-մայիս ամիսների 8,8 տոկոս աճի նկատմամբ, հունվար-հունիսի աճի ցուցանիշը որոշ չափով ավելի փոքր է եղել, ինչը հիմնականում գյուղատնտեսության ցուցանիշներում արձանագրված անկման հետեւանք է եղել: Մինչդեռ, ինչպես տնտեսության մեջ ընդհանրապես, այնպես էլ մյուս ճյուղերում (գյուղատնտեսությունից բացի) գրանցվել է աճ թե՛ հունվար-հունիսի՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի, թե՛ հունիսի՝ մայիսի նկատմամբ: Մասնավորապես, հունիսին մայիսի նկատմամբ տնտեսական աճը կազմել է 31,7 տոկոս:

Ըստ տնտեսության ճյուղերի, հետեւյալ ցուցանիշներն են արձանագրվել: Արդյունաբերությունում աճը կազմել է 12,3 տոկոս, 6,6 տոկոս աճ է գրանցվել հունիսին մայիսի նկատմամբ: Էլեկտրաէներգիայի արտադրություն հունվար-հունիսին աճել է 15 տոկոսով, իսկ հունիսին մայիսի նկատմամբ աճը կազմել է 6,5 տոկոս: Վերոնշյալ ցուցանիշները վկայում են, որ էլեկտրաէներգիայի արտադրության աճը ոչ սեզոնային շրջանում կապված է արդյունաբերության ծավալների աճի հետ: Հայտնի է, որ էլեկտրաէներգիայի հիմնական սպառողները բնակչությունը եւ արդյունաբերությունն են: Եթե ամռան սեզոնին էլեկտրաէներգիայի արտադրությունն ավելանում է, ապա դա նշանակում է, որ այն առավելապես օգտագործվում է արդյունաբերության մեջ: Դրա անուղղակի ապացույցն էլ արդյունաբերության աճի ցուցանիշն է՝ ինչպես տարվա առաջին 6 ամիսներին, այնպես էլ հունիսին՝ մայիսի նկատմամբ:

Շինարարությունում աճը կազմել է 4,1 տոկոս, իսկ հունիսին՝ մայիսի նկատմամբ 47,3 տոկոս: Այստեղ հարկ է նշել, որ շինարարության ծավալների նկատելի աճը վերջին ամիսներին պայմանավորված է այս ոլորտում իրականացվող պետական ծրագրերով՝ ճանապարհաշինություն, ջրագծերի անցկացում եւ այլն: Մասնավոր կառուցապատողները դեռ շատ հեռու են նախաճգնաժամային ակտիվությունից, եթե չասենք՝ սպասողական վիճակում են: Այս առումով, թեեւ ուշացումով, բայց տեղին էր կառավարության վերջերս ընդունած որոշումը անավարտ շինարարություն ունեցող կառուցապատողների նկատմամբ հսկողությունը խստացնելու վերաբերյալ: Եթե նկատի ունենանք, որ մյուս կողմից էլ կառավարությունը պետական երաշխիքներ է պատրաստ տրամադրելու եւ արդեն տրամադրել է մի քանի անավարտ շինարարություն ունեցող ընկերություններին, ապա խրախուսմանը զուգահեռ պահանջների խստացման անհրաժեշտությունն առկա էր:

Ծառայությունների ոլորտում այս տարվա հունվար-հունիսին արձանագրվել է 6,1 տոկոս աճ, իսկ հունիսին մայիսի նկատմամբ՝ 12 տոկոս աճ: Մանրածախ առեւտրում արձանագրվել է 0,7 տոկոս աճ, իսկ հունիսին մայիսի նկատմամբ 6,2 տոկոս աճ: Այս ճյուղերում արձանագրված ցուցանիշները արտացոլում են բնակչության կենսամակարդակի վիճակը: Ծառայություններում աճը մի կողմից վկայում է, որ ավելացել է դրանցից օգտվողների քանակը, բայց մյուս կողմից ծառայություններից օգտվողների մեջ գերակշռում են ունեւոր խավի ներկայացուցիչները: Նկատի ունենալով այս հանգամանքը, ինչպես նաեւ մանրածախ առեւտրում արձանագրված ընդամենը 0,7 տոկոս աճը, կարելի է փաստել, որ բնակչության մնացած՝ գերակշիռ մասի եկամուտների աճը դեռեւս համարժեք չէ տնտեսական աճին:

Վերոնշյալի մասին է խոսում նաեւ պետական միջին աշխատավարձերի աճի ցուցանիշը՝ 4,9 տոկոսով կամ 84,5 հազար դրամ, որը, օրինակ՝ անցյալ տարվերջի ցուցանիշից ավելի է ընդամենը 500 դրամով: Ոչ պետական հատվածում, սակայն, միջին աշխատավարձն ավելացել է 9,8 տոկոսով եւ կազմել գրեթե 131 հազար դրամ, ինչը նկատելի ավելացում է:

Ինչպես արդեն նշեցինք, գյուղատնտեսությունն ունեցել է զգալի՝ 13,1 տոկոս անկում, իսկ հունիսին մայիսի նկատմամբ անկումը կազմել է 2,6 տոկոս:

Արտաքին առեւտրաշրջանառությունն աճխուժանում է: Այս տարվա 6 ամիսներին այն ավելացել է 29,8 տոկոսով եւ կազմել 2 միլրդ 166 միլն դոլար: Արտահանումը կազմել է գրեթե 442,8 միլն դոլար, դարձյալ արձանագրելով նկատելի աճ՝ 55,9 տոկոսով: Ընդ որում, արտահանումն ավելացել է նաեւ հունիսին մայիսի համեմատ՝ 5,9 տոկոսով: Արտահանման ավելացումը նույնպես վկայում է արդյունաբերության աճի մասին: Դա նաեւ արդյունք է մետաղների միջազգային գների աճի, որը կազմում է Հայաստանից արտահանման գերակշիռ մասը, բայց չպետք է մոռանալ, որ հանքարդյունաբերական խոշոր ընկերություններին անցյալ տարի տրամադրվեց ավելի քան 40 միլն դոլար պետական աջակցություն, որը նպաստեց նրանց գործունեության վերականգնմանն այս տարի:

Ներմուծումը կազմել է գրեթե 1 միլրդ 724 միլն դոլար, աճելով 24,4 տոկոսով: Հունիսին մայիսի համեմատ ներմուծման աճը կազմել է 2,8 տոկոս: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը, սակայն, շարունակել է խորանալ՝ կազմելով մոտ 1 միլրդ 282 միլն դոլար:

Գնաճն անցյալ ամսին մայիսի նկատմամբ նվազել է 0,8 տոկոսով եւ հունվար-հունիսին կազմել 7,3 տոկոս: Այն դեռ հեռու է մնում ԿԲ նախատեսած՝ 4 տոկոս գումարած-հանած 1,5 տոկոս նպատակային թիրախից:

Այսպիսով, այս տարվա առաջին կիսամյակի ցուցանիշները թույլ են տալիս ասել, որ մեր երկրի տնտեսությունը հաստատապես դուրս է գալիս ճգնաժամից, եւ ճգնաժամի երկրորդ ալիքի մասին տարածվող լուրերը իրական հիմք չունեն եւ խոսակցությունների մակարդակի են: Եթե, իհարկե, չլինեն համաշխարհային տնտեսական ցնցումներ: Ամենադրական հանգամանքն այն է, որ տնտեսական աճն արձանագրվում է գրեթե բոլոր ճյուղերում եւ հատկապես արդյունաբերությունում եւ էներգետիկայում: Այս տարի նախաժգնաժամային մակարդակին դեռ չենք հասնի, բայց նման տեմպերի դեպքում իրատեսական է թվում, որ այդ մակարդակին կհասնենք արդեն եկող տարվա արդյունքներով:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կարգապահական գումարակի եւ մեկուսարանների խնդիրները

«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ն ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի աջակցությամբ իրականացրել է ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայության տակ գտնվող կայազորային կարգապահական մեկուսարանների եւ կարգապահական գումարակի ուսումնասիրություն: Երեկ «Էրեբունի պլազա» հյուրանոցում տեղի ունեցավ հետազոտության հաշվետվության շնորհանդեսը: Հետազոտությունն իրականացնելիս «Քաղաքացիական հասարակության ինստիտուտը» համագործակցել է պաշտպանության նախարարության հետ: Շնորհանդեսին ներկա էր ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավար, դեսպան **Սերգեյ Կապինոսը**: Նա նշեց, որ 2009-ին կատարված հետազոտության նպատակն էր կարգապահական մեկուսարանների եւ կարգապահական գումարակի պայմաններին ծանոթանալը եւ իրավական, փաստացի հիմքերն ուսումնասիրելը:

«Հետազոտությունը կատարվել է ԵԱՀԿ գրասենյակի այն աջակցությամբ, որը ԵԱՀԿ-ն տրամադրում է բոլոր անդամ պետություններին», ասաց Սերգեյ Կապինոսը:

Ուսումնասիրություններով պարզվել է, որ վերջին տարիներին կատարվում են մեկուսարանների վերանորոգման աշխատանքներ, վերանորոգված մեկուսարաններում պահպանված են ընդհանուր չափանիշները, դրանց սանիտարահիգիենիկ պայմանները կարելի է գնահատել բավարար: Սանիտարահիգիենիկ ծանր վիճակում են այն մեկուսարանները, որոնք դեռեւս չեն վերանորոգվել: Վեդիում, Գյումրիում եւ Էջմիածնում տեղակայված մեկուսարաններում նույնիսկ վերանորոգումից հետո ազատությունից զրկվածների համար ընդունելի պայմանների ապահովումն անհնարին կլինի:

«Կարծում եմ՝ այս ուսումնասիրությունը պաշտպանության նախարարության ենթակայության տակ գտնվող փակ հաստատություններում կարող է նաեւ հասարակական վերահսկողության սկիզբ դառնալ», ասաց «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի նախագահ **Արման Դանիելյանը**: Վերջինիս փոխանցմամբ՝ ձերբակալվածներին ու կալանավորվածներին պահելու օրենքը եւ քրեակատարողական օրենսգիրքը նախատեսում են մշտական, գործող հասարակական վերահսկողություն այդ վայրերում, ինչը, ցավոք, դեռ չի գործում:

Ինչ վերաբերում է կարգապահական գումարակի հետ կապված ուսումնասիրության արդյունքներին, այս առնչությամբ կարեւոր խնդիր է շարունակում մնալ շենքային պայմանների բարելավումը:

Ի. Պ.

ՀՀՇ-Ի ԵԵՐՍՈՒՄ

Տրաժեշտ զենքին

Հեշտամագումարյան զարգացումները ՀՀՇ-ի շուրջը ցույց են տալիս, որ համագումարն, այնուամենայնիվ ի զորու չի եղել լուծել կուտակված ներքին խնդիրները, որոնք առայժմ դուրս են սպրդում անհատական նախաձեռնությամբ, բայց որ դրանք անվերջ հնարավոր չէ քուրսու տակ պահել, հասկանալի է ինքնին. եթե պեծ կա՝ կամ քուրսին կայրվի, կամ էլ հարկավոր է այն շատ լավ թրջել: Թրջել ասելով՝ նկատի ունենք, որ ՀՀՇ-ում դեռ կվերլուծեն ներքին իրավիճակը, եւ սթափ գնահատականներ տվողներ դեռ կլինեն: Ասվածն ապացուցող երկու փաստ արդեն հաջորդել են իրար: Երեկ ՀՀՇ լրատվական ծառայության ղեկավար Կարեն Կարապետյանը, որին այդպես էլ չընդգրկեցին ՀՀՇ 31 հոգանոց վարչությունում, հրաժարվել է պաշտոնից՝ իր այդ քայլը բացատրելով նրանով, որ ՀՀՇ լրատվական ծառայության ղեկավարը պետք է վարչության անդամներից մեկը լինի: Նախորդ օրն ուշ երեկոյան Կարապետ Ռուբինյանն էր էթիսոլյար ժանրից օգտվելով՝ հրաժեշտի նամակ գրել ՀՀՇ-ին, հայտնելով, որ հեռանում է 20 տարի անդամակցած կուսակցությունից: Պատճառների մեջ մատնանշվել են ՀՀՇ վարչության ընտրության կեղծված արդյունքները (դա ցավալի փաստ է համարում Ռուբինյանը, քանի որ 2008-ի կեղծված նախագահական ընտրությունների դեմ պայքարող ուժի հետ է եղել) եւ այն, որ կոնգրեսը պառակտելու իշխանությունների փորձերը «ճղճիմ» անվանած Լեւոն Տեր-Պետրոսյանի վերահսկողության տակ են եղել թե՛ նախահամագումարյան, թե՛ բուսնահամագումարյան գործընթացները, թե՛ որ՝ նախապես վարչության «օրինակելի» ցուցակ է կազմված եղել, թաքուն բաժանված պատվիրակներին, իսկ հաշվիչ հանձնաժողովն էլ կազմված է եղել ընտանեկան կապալի մեթոդով (Ռուբինյանը դա սուորություն էր անվանել իր նամակում): Ռուբինյանն էլ, ինչպես անաչառ աչքով է երեւում, նկատում է ՀՀՇ-ի ներսում ծավալվող անվերադարձ եւ խոր դեգրադացիոն պրոցեսները: Իր նամակում նա խոսում է այն մասին, որ համագումարում ոչ բանավեճ է եղել, ոչ ծրագրերի ներկայացում՝ ժամանակին առաջադեմ ուժ եղած կուսակցության սովորույթների մեջ, ըստ նրա, չի եղել սովետական «ադաբրյամսի» ոճի համագումար անցկացնելը, կամ որ 5-10 րոպե ուշացումով առաջնորդը համագումարի դահլիճ մտնի, որպեսզի բուռն ու անվերջանալի ծափահարություններով ընդհատի այդ պահին խոսողին, սեփական կուսակիցների մեջ էլ 4-5 հոգանոց հրմշտող «ախռանայով» ման չեն եկել. «Ոչ մեկդ չնկատե՞ց, որ մեր պայքարի առաջնորդը հետագա ծրագրերի մասին խոսելու փոխարեն խոսեց այդ պայքարի անիմաստության մասին՝ միեւնույնն է, մինչեւ փոխզիջում չլինի, ոչ մի բան դուրս չի գա: Բայց մենք փոխզիջման պահանջո՞վ էինք դուրս եկել ավազակապետության դեմ պայքարի, ու հետո մեզ էդ ո՞վ է փոխզիջում առաջարկել: Մինչեւ այժմ առաջարկածները կամ արագ, կամ մի փիչ դանդաղ կապիտուլյացիայի առաջարկներ չե՞ն... Հույս չտալով, ժողովրդին սեփական ուժերի նկատմամբ հավատ չներշնչելով, չհամախմբելով ու չոգեւորելով՝ ինչո՞ւ ենք հավակնում իշխանությանը, որ ի՞նչ անենք»: Եվ «մնաք բարով» է ասել իր 20-ամյա կուսակիցներին:

Այս փլավն, իհարկե, դեռ ջուր կվերցնի, որովհետեւ Կարապետ Ռուբինյանը ՀՀՇ-ի հարգված գործիչ էր, անցյալ ունեցող մարդ, որի մասին չեմ լսել, որ ինչ-որ մեկը վատ բան ասի, իսկ ՀՀՇ-ում տեղի ունեցող գործընթացները դեռ նոր են դառնալու հասարակության սեփականությունը:

Մ. Խ.

Orange-ում «գունավոր» համարներն արդեն բոլորի համար են

Orange-ը շարունակում է «լավ բաները բոլորի համար են» արշավը: Այսուհետ Orange-ում «գունավոր» համարներն անվճար են լինելու: Ցանկացած հաճախորդ կարող է ստանալ բրոնզե, արծաթե, ոսկե եւ պլատինե հեռախոսահամար անվճար՝ կատարելով համապատասխան 5000, 10000, 50000, 100000 դրամ կանխավճար, որը կարող է օգտագործել Orange-ի ծառայություններից օգտվելու համար: Այսպիսով, «գունավոր» համարի դիմաց բաժանորդն այսուհետեւ ոչինչ չի վճարի:

«Ամառն Orange-ում անցնում է «լավ բաները բոլորի համար են» կարգախոսի ներքո: «Գունավոր» համարները միշտ հատուկ կարեւորություն են ունեցել Հայաստանում, որոնց համար մարդիկ ստիպված են եղել վճարել, եւ հաճախ՝ բավականին բարձր գին: Orange-ի բաժանորդներն այլեւս խոչընդոտներ չեն ունենա «լավ բաներից» օգտվելու համար, քանի որ այն գինը, որ նրանք պետք է վճարեին համար ձեռք բերելու համար, այժմ ամբողջությամբ կօգտագործեն իրենց հարազատների հետ շփվելու համար», ասաց

Orange-ի գլխավոր տնօրեն **Բրունո Դյուքուան**:

«Գունավոր» համարների այս հնարավորությունը չի վերաբերի միայն «ադամանդ» կատեգորիայի հեռախոսահամարներին, որոնք առայժմ ներկայացված չեն վաճառքում: Այդ համարներն ապագայում կվաճառվեն աճուրդով, որից ստացված ողջ հասույթը կտրամադրվի Orange-ի՝ երեխաներին ուղղված բարեգործական ծրագրին:

Orange-ի մասին

«Օրանժ Արմենիան», որը «Ֆրանս Տելեկոմ» խմբի մասն է կազմում, Հայաստանում շարժական հեռախոսակապի եւ ինտերնետի ծառայություններ է մատուցում 2009թ. նոյեմբերի 5-ից:

Ընկերությունը Հայաստանում 2009թ. կատարել է 140 միլն եվրոյի ներդրումներ, իսկ մինչեւ 2010թ. վերջ կիրականացնի եւս 50 միլն դոլարի ներդրումներ եւ ապահովում է բջջային կապի եւ գերարագ ինտերնետի հասանելիությունը Հայաստանի 500 քաղաքներում եւ գյուղերում: Orange-ի 3G+ ծածկույթն այսօր ամենաընդարձակն է Հայաստանում եւ ծածկում է բնակչության ավելի քան 85% տոկոսը:

Ընկերությունն իր գործունեության առաջին ամսում գրանցեց ձայնային ծառայությունների 100,000-րդ բաժանորդի մուտքը: 2010թ. ապրիլի վերջի դրությամբ «Օրանժ Արմենիան» ուներ 250,000 ակտիվ բաժանորդ, որոնցից 25,000-ը գերարագ ինտերնետի բաժանորդներ են:

Հավելյալ տեղեկությունների համար՝ lilit.martirosyan@orange-ftgroup.am

AZG NEW PDF.qxd 20/07/2010 21:07 Page 1

ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱԿ. Բ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

17 ՀՈՒԼԻՍ, 2010 Թ.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

Սիրելի՛ ընկերներ

Շուրջ մեկ տարի առաջ մենք՝ ներկա պահին այստեղ գտնվողներից շատերի հետ միասին հիմնադրեցինք Արմենական-Ռամկավար Ազատական կուսակցությունը ոչ այնքան խանդավառությամբ՝ որքան պատմական պարտականություն սանձնելու գիտակցությամբ, եւ ոչ այնքան մեծ հույսերով՝ որքան հուսատու քայլեր անելու նախանձախնդրությամբ: Մեկ տարի առաջ Թեհեյան կենտրոնի այս սրահում հավաքվածներս, գրեթե բոլորս էլ հին՝ 1990-92 թթ.-ի ՌԱԿ անդամներ, հիմնադրի պարտավորությունն էինք մեր վրա վերցրել՝

ա) Ի տես այն անփառունակ վիճակի, որում հայտնվել էր մեծ պատմություն ու հրաշալի գաղափարախոսություն ունեցող մեր կուսակցությունը Հայաստանում թե Սփյուռքում: Մեր ցանկությունն էր, նաեւ վճռականությունը, կուսակցությունը փրկել ամբողջական կորուստից: Այսօր, մեկ տարի անց, կարող ենք փաստել, որ մենք իրավացի էինք մեր առաջադրանքի մեջ: Ռամկավար Ազատական կուսակցությունը, ի դեմս Արմենական-ՌԱԿ-ի, այսօր Հայաստանում ունի որոշակի ներկան եւ լուծումը կամ լուծման գործում լուրջ դերակատարություն ունենալը խիստ հավակնոտ ձգտում էր: Մանավանդ որ, առաջին, նման ձգտմամբ հանդես եկող կազմակերպությունների քանակը դեռեւս սակավ է, եւ, երկրորդ, 2003-ից ի վեր անգործության ենթադատապարտված մեր ներկուսակցական կառույցները տաղալված, գրեթե ոչնչացված էին: Հետեւաբար կուսակցության Հանրապետական վարչության առջեւ ծառացած գլխավոր խնդիրը մնում էր եւ մնում է ներկուսակցական ինքնակազմակերպումը: Այսուհանդերձ, մեր կուսակցությունը մնում է իր այդ, ինչքան էլ հավակնոտ, ձգտման մեջ հետեւողական, քանզի պետության ներքին տեւական կայունությունը եւ կայուն զարգացումը Արմենականներիս գլխավոր խնդիրներից է:

Հաշվետու ժամանակաշրջանում Արմենական-ՌԱԿ հանրապետական վարչությունը գումարել է 36 նիստ: Դրանցից 3-ը եղել են ընդլայնված՝ մեր ակումբների վարչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Նիստերի արձանագրությունները, հարակից նյութերով, պատշաճորեն կատարվել են գործադիր-քարտուղարի ջանքերով: Բոլոր նիստերի օրակարգի առաջին հարցը նվիրվել է ներքաղաքական կյանքի քննարկմանը, վարչության անդամներից որեւէ մեկի ներկայացմամբ: Ծանոթանալով նիստերի արձանագրություններին կարելի է նկատել, որ հիմնական ուշադրությունը սեւեռվել է նոր ակումբների կազմության վրա: Այս ընթացքում վարչությանը հաջողվել է ստեղծել եւ վերստեղծել 20 ակումբ՝ Երեւանի տարբեր համայնքներում (թվով 10), ինչպես նաեւ Մասիսում, Կարբի գյուղում, Եղեգնաձորում, Վանաձորում, Գյումրիում, Ստեփանավանում, Մարտունիում, Ամասիայում: Օրերս ակումբներ կստեղծվեն նաեւ Ղափանում, Տավուշում (Իջեւան), Գորիսում եւ այլուր: Պետք է խոստովանել, որ որոշ մարդիկ, հատկապես շրջաններում, կուսակցության շարքեր ընդունվելու հարցին երբեմն մոտենում են ոչ թե գաղափարական նկատառումներով, այլ աշխատանքի տեղավորման հեռանկարայնությամբ: Սա խիստ մտահոգիչ երեւույթ է ոչ միայն մեզ՝ ռամկավար-արմենականներիս համար, այլեւ ընդհանրապես Հայաստանում կուսակցական ինստիտուտի կայացման ու զարգացման տեսակետից: Այլ խոսքով՝ գործարքային է դարձել շատ բան:

Սա ցույց է տալիս այն հոռի վիճակը, որը տիրում է մեր հանրապետությունում՝ ժողովրդի սոցիալական կացությունը, որը քիչ տեղ է թողնում մեր նման հավասարակշիռ եւ հավասարակշռող կուսակցությունների զարգացման համար: Ինչի մասին այսօր մենք առանձին քննարկում կունենանք՝ վարչության առաջարկած բանաձեւերի ներկայացման ընթացքում:

Համենայնդեպս, մեզ հաջողվել է կուսակցության շուրջ հավաքել գաղափարակիր մարդկանց մի մեծ խումբ, որի ուսերի վրա է այսօր դրված մեր երկրում սոցիալական արդարության եւ ստեղծագործ կարողությունների օգտագործման վրա խարսխված հասարակությանը ու պետականության կառուցմանը նպաստելու գործը:

Մյուս կողմից, մենք կուսակցական կարեւոր ձեռքբերում ենք համարում հաշվետու ժամանակաշրջանում մեր երիտասարդական եւ վերջերս վերաձեւավորված կանանց «Զատել Եսայան» ակումբների հետզհետե աճուժացող գործունեությունը: Հույս ունենք, որ կուսակցության հաջորդ եւ իրարհաջորդ վարչությունները մեծագույն հոգատարությամբ կվերաբերվեն այս ակումբներին, նկատի ունենալով նրանց ներուժն ու հնարավորությունները: Ուզում եմ հատկապես շեշտել երիտասարդական խնդիրներով զբաղվելու անհրաժեշտությունը: Դրանից է կախված մեր երկրի ու ժողովրդի ոչ միայն ապագան, ինչպես սիրում ենք հաճախ կրկնել, այլեւ ներկան: Գաղտնիք չէ, որ մեր երիտասարդներից շատ-շատերը, հատկապես նրանք՝ ովքեր կարգին կրթություն եւ մասնագիտություն ունեն, մտածում են երկրից հեռանալու, իրենց ապագան այլ երկրներում կառուցելու մասին: Սրա գլխավոր պատճառը անհեռանկարայնությունն է, այն անհուսությունը, թե երբեւիցե մեր երկրում կլուծվեն սոցիալական արդարության, կենսամակարդակի եւ նման հարցերը:

Հաշվետու ժամանակահատվածում Հանրապետական վարչությունը իրականացրել է մի շարք միջոցառումներ՝ ընկերային, հրատարակչական, քարոզչական, խաղաքական: Դրանցից պետք է առանձնացնել հայ-թուրքական հարաբերություններին նվիրված գիտաժողովը 2009-ի հոկտեմբերի 10-ին, մասնակցությամբ թուրքագետների եւ տարբեր կուսակցությունների եւ ինստիտուտների ներկայացուցիչների: Այս ընթացքում հրատարակել ենք երկու կարեւոր գիրք, երկուսն էլ Հանրապետական վարչության անդամ, պատմաբան Սուրեն Սարգսյանի հեղինակությամբ՝ Սահմանադրական Ռամկավար կուսակցության պատմությունը եւ հայ ազատագրական պայքարի՝ արմենական գործիչների գնահատումը:

Զանց պետք չէ առնել նաեւ մեր երիտասարդների աշխույժ մասնակցությունը միջնադարյան եկեղեցական կոթողներ այցելելու, ինչպես նաեւ նրանց մասնակցությունը Հայերի համաշխարհային խորհրդի նախաձեռնած՝ մինչեւ Ցեղասպանության 100-ամյակ Հայաստանում 1,5 մլն ծառ տնկելու ծրագրին, սկսելով Մարտունու հրապարակից: Լավ սկիզբ ենք համարում կանանց «Զ. Եսայան» ակումբի մանկական խաղալիքների նվիրահավաքը Ուջան գյուղի մանկատան համար:

Ժամանակի սղության պատճառով զանց եմ առնում վարչության իրականացրած մյուս միջոցառումների հիշատակումը, սակայն ցանկանում եմ կարեւորությամբ շեշտել միջկուսակցական հանդիպումներն ու խորհրդակցությունները հատկապես Հանրապետական կուսակցության, «Օրինաց երկիր», «Բարգավաճ Հայաստան» եւ Հայաստանի դեմոկրատական կուսակցության ղեկավարության հետ: Այո՛, մենք բաց ենք եղել այլ կուսակցությունների հետ երկխոսության, խորհրդակցությունների համար: Առաջիկայում պետք է առավել ինտենսիվ դարձնել նման հանդիպումները նաեւ այլ կազմակերպությունների հետ, ստեղծելով ավանդույթ միջկուսակցական տեւակա՛ն երկխոսության:

Հաշվետու ժամանակաշրջանում վարչությունս հանդես է եկել հրապարակային մի շարք հայտարարություններով՝ հայ-թուրքական հարաբերությունների, Ղարաբաղյան հակամարտության եւ այլ հարցերի վերաբերյալ: Քաղաքական շրջանակները հետաքրքրությամբ են ծանոթացել այդ հայտարարություններին, սակայն խորհրդարանական ամբիոնի բացակայության պայմաններում դրանք հասու չեն եղել ժողովրդի լայն զանգվածներին: Այստեղ պետք է խոստովանեմ, որ վարչությունս չի կարողացել լավ աշխատել զանգվածային տեղեկատվական միջոցների հետ: Հեռուստատեսությունը գրեթե անմատչելի է եղել մեզ համար, իսկ տպագիր մամուլը ինտրիգային որեւէ բան չի գտել «հանգիստ ուժի» մեր կուսակցության գործունեության մեջ: Սույն բացը որոշ չափով լրացնելու համար առաջիկա օրերին բացումը կկատարվի եւ կսկսի աշխատել կուսակցության կայքէջը՝ իր պատմական, արդիական եւ համահայկական էջերով, ֆորումներով ու բլոգներով:

Հարգելի՛ ընկերներ,

Ձեզ տրամադրված թղթածրարներում կգտնեք մի շարք բանաձեւերի նախագծեր, որոնք վարչությունս առաջարկում է քիչ հետո քննարկել եւ, ի հարկին լրամշակումից հետո հաստատել եւ հրապարակել: Հետեւաբար չեմ ուզում երկար անդրադառնալ Ղարաբաղյան հիմնահարցի, հայ-թուրքական հարաբերությունների, արտաքին քաղաքականության, ներքին լրջագույն խնդիրների, սոցիալական վիճակի, տնտեսության, կաշառակերության եւ կաշառասուության, առողջապահության, կրթության հարցերի նկատմամբ կուսակցությունս վերաբերմունքին ու դիրքորոշմանը, սակայն չեմ զլանում գեթ հակիրճ ցանդրադառնալ այդ հիմնահարցերից մի քանիսին, ավելի շուտ՝ դրանց վերաբերյալ վարչության դիրքորոշմանը:

Ղարաբաղյան հակամարտություն

Մենք դույզն չափով իսկ չենք կասկածում մեր երկրի ղեկավարության հայրենասիրությանը եւ բարձր ենք գնահատում նրա ջանքերը հարցի խաղաղ կարգավորման համար, պայմանով որ ապահովվի Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը՝ երաշխավորված ու տեւական անվտանգության պայմաններում: Այսուհանդերձ, գտնում ենք, որ այն պահից սկսած, երբ, 1994-ին, հարցը անտեղի կերպով միջազգայնացվեց եւ դուռը լայն բացվեց

AZG NEW PDF.qxd 20/07/2010 21:07 Page 1

ԱԶԳ

Հանդուման

շահագրգիռ տարբեր կողմերի միջամտություններ առաջ, հայկական կողմը, մեր կարծիքով, թույլ տվեց մարտավարական մի շարք սխալներ, որոնք դեռևս շարունակվում են: Առաջին՝ հարցը իր բուն էությունից շեղվեց ու վերածվեց տարածքների վերադարձման խնդրի: Երկրորդ՝ Ադրբեջանին թույլ տրվեց իր փախստականների խնդիրը ուռճացնել եւ առաջ մղել դրանց վերադարձի պահանջը, մինչդեռ հայ բռնագաղթվածների վերադարձի ու հատուցման խնդիրը մնաց սվերում: Երրորդ՝ ձեռքից բաց թողնվեց Ղարաբաղի ժողովրդի դեմ առնվազն երկու պատերազմ շղթայազերծելու հանցագործության համար Բաքվին պատասխանատվության ենթարկելու, պատճառած մարդկային զոհերի եւ ավերածությունների համար հատուցում վճարելու գործը: Չորրորդ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կորցրեց բանակցությունների անմիջական մասնակցի կարգավիճակը: Հինգերորդ՝ ո՛չ Երեւանը եւ ո՛չ էլ Ստեփանակերտը անհրաժեշտ ծավալներով ու կարեւորությամբ չլծվեցին ԼՂՀ-ն վերաբնակեցնելու ծրագրերին, ինչը իրականացնելու դեպքում կդառնար ամենահամոզիչ երաշխիքը անվտանգության: Նշված եւ այլ հանգամանքները նկատի ունենալով, մենք առաջարկում ենք արագորեն վերադասավորել մեր դիվանագիտական, քաղաքական ու ռազմական դիրքերը եւ առավել ակտիվ ու նախաձեռնողական քաղաքականություն սկսել՝ օգտագործելով նաեւ սփյուռքի գործոնը, վերջինիս մղելով քարոզչական եւ լոբբիստական լայնածավալ գործունեության՝ նաեւ այս խնդրով:

Հայ-թուրքական հարաբերություններ

Կարիք չկա ծանրանալու այս հարցի վրա, քանզի, ինչպես ասվեց, Հանրապետական վարչությունը առնվազն 4 հայտարարություն է տարածել այդ մասին եւ քիչ հետո առանձին քննարկման նյութ է դառնալու հարցի վերաբերյալ մեր ընդունելիք բանաձեւը: Միայն ասեմ, որ Հանրապետական վարչությունս կողմ է ոչ միայն հայ-թուրքական հարաբերությունների՝ դիվանագիտական ներկայացուցչություններ հաստատելու եւ սահմանները բացելու, այլեւ Անկարայի հետ խորքային խոսակցություններ վարելու եւ առկա խնդիրները լուծելու առաջադրանքով, ընդհուպ Ցեղասպանության հետեւանքները վերացնելու, համապատասխան հատուցումներ կատարելու, Պոլսո հայոց պատրիարքությունը հայկական եկեղեցական կառույցների եւ հուշարձանների նկատմամբ վերահսկողական լիազորություններով օժտելու, ներկա հանգրվանում սահմանների հայանպաստ փոփոխություններ կատարելու ուղղությամբ: Մենք գտնում ենք, որ թուրքերի հետ երկխոսություն սկսելու նախագահ Սերժ Սարգսյանի փորձը օգտակար էր միջազգային կարծիքը մեր կողմը շահելու տեսակետից: Թեեւ Անկարան վիժեցրեց այդ նախաձեռնությունը, սակայն, կարծում ենք, որ հայկական իշխանությունները պետք է միշտ պատրաստ լինեն կառուցողական երկխոսության համար: «Ֆուտբոլային դիվանագիտության» փորձը մեզ սովորեցրեց, որ հայկական կողմը այլեւս պետք չէ համաձայնվի փաթեթային ընդգրկում ունեցող որեւէ համաձայնագրի տակ ստորագրել, խուսափելու համար շահարկումների եւ նախապայմանների՝ թուրքական գործելաձեւից:

Այստեղ չեմ կարող չանդրադառնալ մի իրողության, որ հայ-թուրքական արձանագրությունների քննարկման ամենաբուռն օրերին, երբ ՀՀ նախագահը ձեռնարկում էր իր համահայկական ուղեւորությունը Սփյուռքի տարածքում եւ ՀՅԴ-ի հրահրմամբ որոշ վայրերում դիմավորվում ստահակների ամոթալի արարքներով, ՌԱԿ-ի ներկայացուցիչները հատկապես Բեյրութում եւ Նյու Յորքում, դրսեւորեցին իրենց հարգալի վերաբերմունքը եւ սատարեցին Սերժ Սարգսյանի նախաձեռնությանը, իսկ ՌԱԿ մամուլի 8 օրգաններից 7-ը անվերապահ աջակցություն ցույց տվեցին այդ նախաձեռնությանը եւ ջրեցին այն տղավորությունը, թե Սփյուռքը գտնվում է ՀՅԴ-ի միահեծան ազդեցության տակ: Ափսո՜ն սակայն, որ ռամկավարների նման կեցվածքը ըստ արժանվույն չգնահատվեց մեր իշխանությունների կողմից:

Կառավարման համակարգ

Թեեւ քննարկվելիք բանաձեւերում առանձին չենք ներառել այս ոլորտը, սակայն այլ բանաձեւերում հիմնական քննադատությունը բնականաբար ուղղված է այս համակարգին: Այստեղ չեմ կարող մի քանի խոսք չասել գործող համակարգի մեկ-երկու թերությունների մասին:

Մենք բազմիցս ենք բարձրաձայնել կառավարության եւ ընդհանրապես իշխանության տարբեր օղակներում խիստ ուռճացված աշխատակազմերի, դրանց սպասարկող բազմաթիվ անձնակազմերի, ավտոմեքենաների ու սարքավորումների մասին: Ճիշտ է, հակաճգնաժամային պայքարի ժամանակաշրջանում, որն ամենուին դեռ չի ավարտվել, որոշակի քայլեր առնվել են խնայողությունների ուղղությամբ, սակայն դրանք մնում են խիստ անբավարար: Կրճատումներ, կրճատումներ, կրճատումներ: Պետք է կրճատել կառավարական ապարատը: Ահա թե որտեղից պետք էր սկսել օպտիմալացումը: Պետք է հրաժարվել կոալիցիոն ներքին կվոտաների սկզբունքից: Առանց այդ էլ պետական ներկայությունը մեր ամենն ինչում խիստ մեծ է:

Մեզ բոլորովին անհասկանալի է թվում ներկայիս կիրառվող կոալիցիոն մեկ այլ սկզբունքը գործադիր իշխանությունում: Կոալիցիոն ուժերից մեկը, փաստորեն, կարող է կառավարության կազմից ցանկացած պահին հեռանալ իր ներկայացուցչին եւ, ընդհակառակը, հանրապետության նախագահը իր հարմար գտած պահին կարող է տվյալ կուսակցության ներկայացուցչին փոխարինել մեկ ուրիշով՝ պարզապես վերջին պահին լուծելով վերջինիս կուսակցականության հարցը: Սա, գումարվելով հանրապետությունում ի սկզբանե հաստատված այն հոռի սովորության վրա, որով հասարակությանը ոչ մի բացատրություն չի տրվում տվյալ պաշտոնյայի հրաժարեցման կամ նշանակման նպատակահարմարության եւ պատճառների մասին, բնականաբար թուլացնում են կառավարման ողջ համակարգը՝ թե՛ նախագահական, թե՛ վարչապետի եւ թե՛ նախարարական ինստիտուտները: Այս խոցելի դիրքը, մյուս կողմից, առիթ է տալիս կոալիցիային մաս կազմող կամ մաս կազմած կուսակցություններին խուսանավելու պատասխանատվության հարցում: Մինչդեռ հստակորեն պետք է ընդգծվի՝ գործադիրի որեւէ թերացման համար պատասխանատու են կառավարության բոլոր անդամները, կոալիցիային մաս կազմող բոլոր կուսակցությունները հավասարապես:

Տնտեսական

Հակառակ պետական եւ միջազգային ֆինանսական կառույցներից պարբերաբար հայտարարվող դրական տվյալներին, որոնց հավատի չընծայելու որեւէ պատճառ չունենք, Արմենական-ՌԱԿ-ը պնդում է, հիմք ընդունելով ժողովրդի կենսամակարդակի ռեալ տվյալները, որ ազգաբնակչության սպար մեծամասնության կյանքում հիշյալ տվյալները դրական որեւէ փոփոխություն չեն առաջացրել: Ընդհակառակն՝ օր-օրի ահավոր չափերի հասնող սղաճը, լայն սպառման ապրանքների եւ անհրաժեշտ ծառայությունների գները, այն էլ սպառողական հասարակության ձեւավորմանը զուգընթաց, անտանելի են դարձնում շատ-շատերի կյանքը, տեղիք տալով հասարակական լայն շերտերի արդար դժգոհությանը: Ֆինանսական մարմինների եւ կյանքի իրական տվյալների միջեւ այս հակասությունը, մեր կարծիքով, միայն մեկ բացատրություն կարող է ունենալ՝ ընդհանուր եւ համախառն թվերի ու տոկոսների մեջ կորում է մեծամասնության իրական եկամուտների ու ծախսերի հարաբերակցությունը: Այլ խոսքով՝ հասարակության մի փոքր զանգվածի տվյալները տարածվում են ողջ երկրի ու հասարակության վրա, մարդկանց մի փոքր տոկոսի մոտ կենտրոնացած է եկամտի մեծ մասը, այդ եկամուտները հավասարաչափ չեն բաշխված մայրաքաղաքի, մարզերի եւ հեռավոր շրջանների միջեւ:

Այստեղից մեկ քայլ է դեպի օլիգոպոլիա, օլիգարխիկ տնտեսություն, որի դեմ պայքարի՝ հակամենաշնորհային գործողությունների տեսքով՝ օրինակներ մենք տեսնում ենք գործադիր իշխանության ջանքերում: Նշանակում է՝ ֆինանսական հոսքերի վերահսկողությունը իրականացնող մարմիններին հաջ հայտնի է այս բոլորը: Սակայն քաղաքական իսկական կամք է պետք համակարգային փոփոխություններ կատարելու համար, ինչը, քաղաքական նկատառումների ներկա պայմաններում անհնար է թվում: Քանզի օլիգարխները, մենաշնորհայլները միայն նրանք չեն, ովքեր փող ունեն, այլ նրանք՝ ովքեր ունեն նաեւ իշխանություն, այսինքն՝ որոշում կայացնելու կամ օրենքներ ընդունելու իրավունք: Փող՝ իշխանության համար եւ իշխանություն՝ փողի: Սա՛ է մեր հանրապետության զարգացման գլխավոր խոչընդոտը՝ համատարած եւ համակարգված կաշառակերության հետ:

Մենք հաճախ ենք հպարտորեն կրկնում միջազգային ֆինանսական կառույցների գովեստը մեր բանկային համակարգի վերաբերյալ: Իրավացիորեն: Քանզի նրանցից ոչ մեկը փուլ չեկավ, չսնանկացավ տնտեսական ճգնաժամի պայմաններում: Դա անշուշտ արդյունք էր Կենտրոնական բանկի հակակշիռների եւ ազդու գործիքների կիրառման: Սակայն եկեք մենք մեզ հարց տանք՝ ո՞ւմ են պատկանում եւ ի՞նչն են ֆինանսավորում այդ բանկերը: Արդարեւ, դրանց մեծ մասը ստեղծված է գերազանցապես ինքնասպասարկման համար: Թափնվելով ռիսկեր չսանձնելու զգուշավորության տակ, նրանց մեծ մասը միայն շինարարությանն են ֆինանսավորում, գրեթե բոլորովին «մոռանալով» արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, միջին եւ մանր ձեռնարկատիրությունը: Ասում են՝ Հայաստանի բանկերում ավանդների ընդհանուր գումարը տատանվում է 4-4,5 մլրդ դոլարի սահմաններում: Ո՞ւմ են պետք այդ սառեցված գումարները: Ինչո՞ւ չի զարգանում երկրորդային շուկան, արժեթղթերի շուկան:

Մենք կարծում ենք, որ կառավարությունը պետք է նախաձեռնի պետական մի շարք ձեռնարկներ՝ բաժնետոմսերի բաց վաճառքով, որի դեպքում բանկերում սառած այդ գումարները գործի կդրվեն, մարդկանց շահույթ կապահովեն եւ, միաժամանակ, կստեղծվեն նոր աշխատատեղեր՝ մեղմացնելով սոցիալական լարումը:

Սիրելի ընկերներ,

Եվս մեկ անգամ կուզենայի հիշեցնել մեր գաղափարախոսության էությունը: Մենք ազատականներ չենք, ոչ էլ ռամկավարներ: Մենք ռամկավա՛ր-ազատականներ ենք: Ազատականություն՝ տնտեսության եւ այլ ասպարեզներում, եւ ռամկավարություն՝ բոլոր պարագաներում: Զույգ գաղափարախոսություն՝ միասնության մեջ, մեկը մեկին հակակշռող, մեկը մեկին խթանող: Հավասար առիթ՝ բոլորի համար, յուրաքանչյուրը իր կարողություններ համեմատ ինքնադրսեւորվելու: Հայաստանը, ուշ կամ կանուխ, հասնելու է դրան: Ուրիշ ելք չկա:

Եվ որպեսզի շուտ գա այդ օրը, Արմենական Ռամկավարներս պետք է մեկտեղենք եւ լարենք մեր ուժը, կազմակերպվենք ու զորանանք, եւ 2012 թ.-ին վերստին մուտք գործենք Ազգային ժողով, մեր նպաստը բերենք մեր պետության հզորացմանը, մեր ժողովրդի բարգավաճմանը, համայն հայության համախմբմանը:

Հաջողություն մեզ:

ՈՂՋՈՒՅՆԻ ԵԱՄԱԿՆԵՐ

Արմենական-ՌԱԿ 2-րդ համագումարի առթիվ ստացվել էին ողջույնի մի շարք նամակներ՝ ՌԱԿ նախկին ատենապետ դոկտ. Արտավիր Գյոնջյանից, ՌԱԿ Լոնդոնի Մ. Տամատյան ակումբի ատենապետ Վարդան Ուզունյանից, ՌԱԿ Մոնրեալի ակումբի ատենապետ Հրաչ Թորիկյանից, ՌԱԿ համաբխարհային խորհրդի գործադիր վարչության անդամ տեր եւ տիկին Սերոբ եւ Մարո Պետրոսյաններից: Ստորեւ հրատարակում ենք մի քանի այլ նամակներ:

Պատուարժա՛ն Վարչութիւն
Եվ պատգամաւորներ
Հայաստանի Արմենական Ռամկավար Ազատական Կուսակցութեան,

Ուրախութեամբ կ՛ողջունենք մեր քոյր կազմակերպութեան բոլոր անդամ-անդամուհիները՝ կուսակցութեան երկրորդ ընդհանուր համաժողովի գումարման առիթով:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը մեր ազգանուէր տոհմի հարազատ քաղաքական կազմակերպութիւններէն մէկն է, որ հայ ժողովուրդին նուիրեց արժանաւոր զաւակներ եւ այժմ իր առաջ ունի, մասնաւորաբար Հայրենիքի մէջ՝ միայն յաղթութեամբ լեցուն իմաստալից ապագայ մը:

Այսու կու գանք յանուն Ռամկավար Ազատական կուսակցութեամբ Ամերիկայի եւ Գանատայի Շրջանային վարչութեան, իր եօթը մասնաճիւղերով, երկու շաբաթաթերթերով եւ երեք մշակութային կեդրոններով առլցուն անդամակցութեան կողմէ մեր անկեղծ շնորհաւորանքները փոխանցելու Ձեզի, մաղթելով կատարեալ յաջողութիւն ի փառս Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց:

Յարգանօք՝

Ի Դիմաց Մ. Նահանգներու եւ Գանատայի ՌԱԿ Շրջանային վարչութեան

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ
ՔԱԲԳԷՆ ՄԿՐԵԱՆ
Համատեղնագրեներ

Հայաստանի Արմենական-Ռամկավար Ազատական Կուսակցութեան
Սիրելի՛ ընկերներ եւ ընկերուհիներ

Հեռաւոր Մոնթրէալէն ջերմագին ողջոյն բոլորիդ:

Խանդավառութեամբ եւ ուրախութեամբ օր-օրին «**Ազգ**»-ի սիւնակներէն կը հետեւինք ձեր աշխոյժ գործունէութիւններուն ու արձանագրած յաջողութիւններուն, թէ՛ կազմակերպչական եւ թէ՛ քաղաքական մարզերէ ներս:

Նորահաստատ կուսակցութեան մը համար, յարաբերաբար կարճ ժամանակամիջոցի մէջ ձեր շարքերու արագ խտացումը եւ երկրի տարբեր շրջաններու մէջ տարածումը կենսական կարեւորութիւն եւ նշանակութիւն ունին կուսակցութեան հզօրացման տեսանկիւնէն: Իսկ քաղաքական կեանքէն ներս արդէն իսկ սկսած է լսելի դառնալ ձեր ձայնը մեր մամուլի ընդմէջէն, թէ՛ Հայաստանի մէջ եւ թէ՛ Սփիւռքի տարածքին: Ասիկա ողջմտութեան ձայնն է, կշռադատուած եւ վստահելի խօսքն է, որ պիտի համախմբէ ժողովուրդը, եւ կուսակցութիւնը առաջնորդէ դէպի խորհրդարան ու կառավարութիւն, նեցուկ հանդիսանալով պետականութեան, միշտ առաջնորդուած միայն ազգի գերագոյն շահերէն:

Նոյն այդ սկզբունքներուն վրայ հիմնուած, տարբեր ժամանակներու եւ բոլորովին տարբեր քաղաքական ու ընկերային միջավայրերու մէջ վերջին 125 տարիներուն ընթացքին աշխատեցան Ռամկավար Ազատական Կուսակցութեան ու զայն բաղկացնող քաղաքական հոսանքները, սկսեալ՝ առաջին հայ քաղաքական կազմակերպութենէն՝ Արմենական Կուսակցութենէն: Բոլորին հասարակ յայտարարն էր լրջախոհ, զարգացած ու քաջ ղեկավարութիւնը, եւ անձնուէր, պարկեշտ ու հաւատաւոր անդամակցութիւնը, հեռու ցուցամոլութենէ եւ արկածախնդրութենէ: Կուսակցութիւնը միջոց էր եւ ոչ նպատակ:

Այսօր, մեր հայրենիքի ճակատագրական այս հանգրուանին, երբ երկու տասնեակ տարիներու կեղծիքի ու ապաբարոյ «բանակցութիւն» որակուած քաշքշուքները ա՛լ յագեցած, համբերութեան բաժակները յորդելու մօտ, հասած կը թուի ըլլալ «պահը ճշմարտութեան», ինչպէս կ՛ըսէ ընկեր Արմէն Մանվէլեան, որ արդարութեան հիման վրայ կարգաւորուին հարցերը, միայն մաղթենք, Վահան Թէքէանի բառերով՝ «Թող ընդհարումը ըլլայ կարճ»:

Յաջողութիւն Արմենական-Ռամկավար Ազատական Կուսակցութեան հերթական ընդհանուր ժողովին:

Տոքթ. Յարութիւն Արզումանեան
Ատենապետ ԹՄՄ Մ. Ն. եւ Գանատայի Կեդրոնական Վարչութեան
Նախկին անդամ ՌԱԿ Կեդրոնական Վարչութեան

Սիրելի՛ ընկերներ

Այսքա՛ն կարճ ժամանակամիջոցի եւ տուեալ ոչ նպաստաւոր պայմաններու մէջ այսքա՛ն իրագործում Արմենական-ՌԱԿի Հանրապետական վարչութեան կողմէ՝ համազօր է միայն հրաշքի: Ակնկալենք, որոնք կը յիշատակուին 125-ամեայ Արմենական Կուսակցութեան հետ: Երանի՜ թէ բարենպաստ պայմաններ ըլլային ու բոլորս կարենայինք այս օրերուն այցելել մեր երեք Մկտիչներուն. Փորթուգալեան՝ Մարսէյլ, Խրիմեան՝ Էջմիածին ու Աւետիսեան՝ Ս. Բարթուղիմէոս... եւ տայինք մեր յարգանքի տուրքը անոնց, որոնք եղան դայեակները ազգային ազատագրական պայքարին: Ու մենք շառաւիղը այդ համբուրելի առաջնորդներուն՝ ուխտելու ենք որ սերունդներ ամբողջ պիտի գալենք անոնց գծած ուղիէն, վերջապէս ռազմկավար ազատական մեր դպրոցէն:

Ձեզի կը մաղթեմ ամբողջական յաջողութիւն: Ժիր կեցէ՛ք, որովհետեւ ուշ կամ կանուխ իւրաքանչիւր հայ Հայաստանի թե Սփիւռքի մէջ պիտի անդրադառնայ իրաւ հայրենասիրութեան ճանապարհին, որ անպայմանորէն գծուած է արմենականներու կողմէ աւանդական Հայաստանի Վան քաղաքին մէջ: Եւ չըսենք այլեւս գալ տարի Վանի մէջ, այլ՝ ա՛յս տարի Վանի մէջ:

Հրտսընի ափէն բիւր ողջոյն, սիրելի ընկերներ: Վստահ եմ, որ բացառիկ ու յաջող համագումար մը պիտի ունենաք Հրազդանի ափին:

ՅԱԿՈԲ ՎԱԲԳԻՎԱՌԵԱՆ
Նիւ Ջըրզի

AZG NEW PDF.qxd 20/07/2010 21:05 Page 1

Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանը վերաբացվեց 200 նոր ցուցանմուշներով

Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանը վերանորոգումից հետո ներկայանում է 12 բաժիններից բաղկացած նոր ցուցադրությունով. Քանաքեռ, Էջմիածին, Ներսիսյան դպրոցի եւ Դորպատի համալսարանի ուսումնառության տարիներ, 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմ, Աբովյանը մանկավարժ, Աբովյանը եւ եվրոպական գրականությունը... մինչ՝ «Անհայտ բացակայությունը»:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Աբովյանի կողմից գրված դասագրքերի եւ ժողովրդական ընթերցանության համար նախատեսված ձեռնարկների բնագրերը, աշխատությունները, որոնք ծառայել են որպես ժողովրդական դպրոցների ուսուցիչներ պատրաստելու ուղեցույցներ: Մեծ հայի կյանքի ու գործունեության այս եւ այլ դրվագներն են ներկայացնում գրողի 200-ամյակին նվիրված ցուցադրության բազմաթիվ վավերագրերն ու լուսանկարները, շուրջ 1500 ցուցանմուշ:

Ցուցադրության բացմանը ներկա էին ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, փոխնախարար Արեւ Սամուելյանը, որ հանդես եկավ բացման խոսքով, մտավորականներ, արվեստագետներ, դպրոցականներ:

Խ. Աբովյանի տուն-թանգարանը ստեղծվել է 1938 թ. ապրիլի 25-ին, ՀԽՍՀ ժողովրդական կոմիսարների

խորհրդի որոշմամբ, համաձայն որի գրողի Քանաքեռի հայրական տունը վերակառուցվել եւ վերածվել է տուն-թանգարանի: 1939 թ. նոյեմբերին թանգարանը իր դռներն է բացել առաջին այցելուների առջեւ:

1978 թ. կառուցված թանգարանի նոր շենքը թանգարանը հիմնանորոգվել է 2005-ին:

Մ. Մ.

ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ԽՄԲԱԳԻՐԸ

Ուշագրավ նախաձեռնություն. 92 հրատարակություն՝ մեկ վկայարանում

Բեյրութում, ս. թ. հունիսի կեսին լույս տեսավ «Վկայարան Հայկական Ցեղասպանութեան» մատենաշարի առաջին հատորը: Դա պատրաստել է մասնագիտությամբ ինժեներ-դաղաքաղաքագետ **Հարություն Իսկահայանը**: Խմբագիրն է **Գեւորգ Յազըճյանը**: Հատորը լույս է տեսել լիբանանահայ ազգային բարերար Կարոլիս Լ. Նազարյանի հրատարակչական հիմնադրամի ծիրում՝ իբրեւ նրա 14-րդ հրատարակությունը:

Հատորն սկսում է պատրաստողի կազմած «Յառաջաբանով» (էջ 3-7), որտեղ նա տեղեկություններ է տալիս իր մտահղացման մասին եւ շնորհակալություն հայտնում դա իրագործելու հարցում իրեն օժանդակողներին, մասնավորաբար՝ Բեյրութի «Սփիւռք» պարբերականի անձնակազմին, որ պարբերականի հարուստ գրադարանի գրքերը տրամադրել է, օգնել խորհուրդներով, իսկ վարչական պատասխանատու Սագօ Օգնյանն էլ սիրահոժար կերպով կատարել է համակարգչային շարվածքն ու էջադրումը:

Նկատի ունենալով այսօրվա մարդկության, այդ թվում՝ հայի բազմազբաղությունը եւ ժամանակի սղությունը, Հարություն Իսկահայանը որոշել է իր ազատ ժամերի մեծագույն մասը տրամադրել ընթերցանությանը եւ մի քանի գրքերով ներկայացնել Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրողների վկայագրերի կամ այդ մասին հաղորդումներ պարունակող գրքերի ամփոփումները: Մեկ խոսքով՝ սա գիրք-մատենաշար է Հայոց ցեղասպանությանն առնչված եւ առ այսօր լույս տեսած հուշագրական բնույթի գրքերի մասին:

Հ. Իսկահայանը խոստովանում է, որ ինքը, չունենալով պատմագիտական կամ բանասիրական կրթություն, հեռու է մասնագիտական խորությունից եւ նյութը ներկայացնում է հանրամատչելի տեսքով: Հեղինակը «Յառաջաբանում» գրում է, թե «այս ժողովածուն պարզապէս փորձ մըն է ներկայացնելու Հայկական Եղեռնապատումի գրաւոր արձագանգներուն համապատկերը»:

Մատենաշարի առաջին գրքում տեղ են գտել նախապես հրատարակված 92 գրքերի, ժողովածուների կամ գրքույկների վկայությունների ամփոփումները, որոնք միմյանց հաջորդում են ժամանակագրական կարգով՝ 1916թ.ից մինչեւ 2008թ: Իսկահայանն ընդգրկել է նաեւ գեղարվեստական գրականությունը՝ եթե տվյալ երկը հեղինակվել է հուշագրական փաստացի նյութի հիման վրա: Այսպիսով, 17 x 24 սմ. չափսի 368 էջի մեջ ի մի են բերվել այդ կարեւոր նյութերը:

Հատորին արժեքը մեծացնում են ամփոփվող յուրաքանչյուր գրքի առաջին շապիկների լուսանկարներն ու գրքի ավարտին տպված, հիշատակվող անձնանունների եւ տեղանունների ցանկերը, որոնք կազմել է հեղինակը:

Թեեւ առաջին գրքի հիմքը կազմած հրատարակությունների մեծագույն մասը հայերեն է, սակայն պատրաստողի՝ բազմաթիվ լեզուների իմացությունը թույլ է տալիս նրան՝ այս մատենաշարում ընդգրկելու նաեւ օտարալեզու վկայությունները: Նա գրում է, թե շատ շնորհակալ կլինի, եթե «ուրիշներ եւս կատարեն նման աշխատանքներ, յատկապէս այն լեզուներով հրատարակութեանց, որոնք հասու չեն ինծի»:

Հարություն Իսկահայանի պատրաստած ու շարունակելի «Վկայարանը» մեծաքանակ ու անհերքելի նյութ է պարունակում հայկական Նյուրնբերգի ամբաստանագիրը կազմելու համար:

Կապի հասցե՝ hiskahadian@hotmail.com:

ԳԵՎՈՐԳ ՅԱԶԸՃՅԱՆ

50-ամյա «Քանքերը»

1960 թվականի հունիսին, ուղիղ հինգ տասնամյակ առաջ, լույս տեսավ «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի առաջին համարը: Այն, գործնականում, դեռեւս 1956 թվականից լույս տեսնող հայկական արխիվային առաջին պարբերականի՝ «Ինֆորմացիոն բյուլետենի» ուղղակի իրավահաջորդն էր՝ առավել ծավալուն մակարդակով: 20 մամուլ ծավալով, 1000 օրինակ տպաքանակով, ՀԽՍՀ արխիվային վարչության ամենամյա պարբերական «Բանբերը», ինչպես նշված էր հանդեսի առաջին համարի նախաբանում, կոչված էր. «Գիտական շրջանառության մեջ դնելու հայ ժողովրդի պատմության վերաբերյալ արխիվային դոկումենտալ նյութերը...»:

«Բանբերի» այսօր արդեն 115 համարներից 21-ը փաստաթղթերի թեմատիկ ժողովածուների հրատարակումներ են: Թվարկենք դրանցից մի քանիսը. «Ռուս-հայկական համագործակցությունը Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու ժամանակաշրջանում (1826-1828 թթ.)», «Նախիջեւան-Շարուրը 1918-1921 թթ.», «Հայոց ազգային համախորհրդակցությունը. Թիֆլիս, 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր», «Անդրանիկ Օզանյան», «Ծովական Լ. Մ. Սերեբրյակով» եւ այլն:

1986-ին, Հայաստանի երրորդ հանրապետության սոցիալ-տնտեսական դժվարագույն պայմաններում, «Բանբերի» լույս ընծայումը դադարեցվեց: Վեցամյա հարկադիր դադարից հետո՝ 2001-ին «Բանբերը» վերահրատարակվեց: Եվ քանի որ տարին անցնում էր Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանի համաժողովրդական տոնակատարության նշանաբանով, «Բանբերը» լույս տեսավ «Քրիստոնյա Հայաստան-1700» խորագրով:

Այսօր «Բանբեր Հայաստանի արխիվների» գիտատեղեկատու հանդեսն արդի հայագիտության հեղինակավոր պարբերականներից մեկն է՝ միակն իր տեսակի մեջ: Նրա էջերում հրապարակված վավերագրերի ընտրանիներն ու հետազոտական հոդվածները լուրջ ներդրում են հայոց նոր ու նորագույն շրջանի պատմության ուսումնասիրության բնագավառում: Հանդեսի էջերում տպագրվում են ինչպես հանրապետության ճանաչված պատմաբանների, այնպես էլ պատմագիտության մեջ իրենց առաջին քայլերը կատարող երիտասարդ գիտաշխատողների հոդվածները: Նշենք, որ «Բանբերը» ընդգրկված է Բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) հաստատած «Դոկտորական եւ թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրի ցանկում»:

Տարիներ շարունակ հանդեսի էջերում հրապարակվել են նորահայտ բազմաթիվ փաստաթղթեր, որոնք միսված են եղել պատմության «սպիտակ էջերի» լուսաբանմանը: Պակաս կարեւոր չէ եւ այն, որ հանդեսը մշտապես ունեցել է մի շատ կարեւոր գործառույթ՝ արխիվային բազմատեսակ տեղեկատվությամբ, արխիվագիտական նյութերով ուսանել, մասնագիտական գիտելիքներ հաղորդել հատկապես երիտասարդ արխիվագետներին:

«Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսը գիտահրատարակչական 50-ամյա պատվաբեր ուղի է անցել: Նրա նշանակությունը օրավուր կարեւորվում է:

Մաղթենք ուրեմն հանրապետության միակ արխիվային պարբերականին՝ հետագա բեղուն գործունեություն:

ՎԱՐԴԻԹԵՐ ՄԱՆԳԱՄԱՐՅԱՆ
Հայաստանի ազգային արխիվի
մամուլի քարտուղար

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄ

Սեպուհ եպիսկոպոս Չուլջյան. «Դուք ձեր տունը շենացնելու պարտավորությունն ունեք»

Սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրի շրջանակներում՝ սամբուլահայ 16 պարմանուհիներ Հայաստանում են: Աղագա ուսուցչուհիները հայկական հինգ տարբեր դպրոցների շրջանավարտներ են, այժմ ուսանում են Սամբուլի «Այդընի» համալսարանում: Այցելության նպատակն է մոտիկից ծանոթանալ հայաստանյան իրականությանը, սերտ շփում հաստատել իրենց հայրենակիցների հետ. նրանք հյուրընկալվել են հայ ընտանիքներում, որտեղ մնալու են երկու շաբաթ: Արդեն եղել են Արտաշատում, Խոր Վիրապում, Մատենադարանում, Սեւանում եւ այլուր:

Հուլիսի 15-ին Վանաձորում նրանց ընդունեց Հայ առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ **Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը**: Մինչ սրբազան հոր հետ հանդիպումը նրանք այցելել էին Սպիտակի Սուրբ Հարություն, Վանաձորի Սուրբ Աստվածածին եւ Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցիներ: Առաջնորդարանում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Սեպուհ սրբազանը ներկայացրեց Գուգարաց թեմի պատմությունը, խոսեց Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման կարեւորության մասին՝ բարձր գնահատելով այդ ուղղությամբ Սփյուռքի նախարարության եւ անձամբ նախարարի իրականացրած ծրագրերն ու ձեռնարկումները: Սրբազանը առանձնակի կարեւորեց երիտասարդության դերը՝ շեշտելով ազգային եւ եկեղեցական կառույցներում նրանց ակտիվ գործունեության անհրաժեշտությունը, ինչի կարիքն զգացվում է առավելաբար պոլսահայ իրականության մեջ: Նա երիտասարդներին հորդորեց ամրապնդել կապը իրենց թուրք հասակակիցների հետ, քանզի երիտասարդների կապերն ու բարեկամությունն առավել կնպաստեն երկու ժողովուրդների բարիդրացիական հարաբերություններին: Կոչ անելով համախմբվել Պոլսո հայ պատրիարքության՝ իբրեւ միակ ներկայացուցչական կառույցի շուրջը, սրբազանը նրանց հորդորեց սիրո եւ համերաշխության պայմաններում սատար լինել հայ համայնքի խնդիրների լուծմանը: «Մարդու ինքնության պահպանման մեծագույն գրավականը լեզուն է եւ հավատը. այս երկու արժեքները յուրաքանչյուր հայ պետք է կրի իր մեջ,- ասաց Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը: -Բնականաբար, շատ էական, պարտադիր է նաեւ մեր հարեւան թուրք ժողովրդի մշակույթն ու պատմությունը լավ իմանալը եւ մեր մշակույթին ու պատմությանը նրանց քաջատեղյակ դարձնելը: Պատմական ճշմարտությունն իմանալը ավելի անկեղծ ու բարդույթներից զերծ կդարձնի երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունները: Դուք Հայաստանին ավելի լավ ծանոթանալով՝ այդ մասին կհաղորդեք նաեւ ձեր թուրք սերնդակիցներին:

Մեր լեզուն, մշակույթը, նախնյաց հիշատակը պահելով՝ ամեն մեկդ կնպաստեք երկու ժողովուրդների բարեկամությանը: Դուք ամեն մեկդ անպաշտպան դեսպաններ եք, որ պիտի ներկայացնեք մեր ժառանգությունները տարբեր ազգերին: Ես աղոթք եմ հղում առ Աստված, որ հայ եւ թուրք ժողովուրդները խաղաղությամբ ու փոխադարձ հարգանքով, անշահախնդիր բարեկամությամբ ապրեն կողք կողքի՝ չմթագնած ճշմարտությունը որպես անբեկանելի արժեք կրելով իրենց հոգիներում»:

Աղագա ուսուցչուհիներն այցելեցին նաեւ Գուգարաց թեմի «Ծիծեռնակ» ճամբար՝ ծանոթանալով այնտեղ հանգստացող պարմանիների առօրյային, զրուցելով նրանց հետ: Հեշտարքական եւ բովանդակալից հանդիպումը՝ Սեպուհ սրբազանի, թեմի հոգեւոր հայրերի եւ «Ծիծեռնակ» ճամբարի երիտասարդների հետ, տպավորել էր նրանց: Իսկ սրբազան հոր խոսքն անմոռանալի էր. «Այս երկիրը ձերն է, ձեր տունն է, եւ դուք նույնպես այն շենացնելու պարտավորությունն ունեք»:

ԽՈՐԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Պատմական կնունք Չինաստանում

2010 թ. հուլիսի 9-ին Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ Չինաստանի հայ համայնքը սեփական հողի վրա ականատես եղավ պատմական կնունքի:

Հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ հոգեշնորհ Տ. Խորեն աբդ. Հովհաննիսյանին հատուկ հրավիրել էին՝ կատարելու մկրտության խորհուրդը: Այն տեղի ունեցավ Հարավային Չինաստանի Շենզեն քաղաքում՝ մասնակցությամբ մոտ քառասուն հայորդիների:

Տեղի ունեցավ Ընծայի եւ Ահարոնի մկրտությունը՝ Հարություն եւ Լիզա Սերտ ամուսինների զավակների: Հաջողակ գործարարները տարիներ առաջ Ֆրանսիայից էին տեղափոխվել Չինաստան: Չունենալով հայկական եկեղեցի այնտեղ՝ Սերտ ընտանիքը մկրտության առիթով իր օջախը վերածել էր եկեղեցու:

Չինաստանի հայ համայնքը, որ հայտնի է Չայնահայ անունով, նվազ հայտնի լինելով մյուս հայկական համայնքներից, անցյալ տարիների ընթացքում արդեն իսկ հասել է երկու հարյուրի, որոնք ապրում եւ սովորում են հիմնականում ծովափնյա քաղաքներում, ինչպիսին են Շանհայը, Գուանզուն, Շենզենը եւ Հոնկ Կոնգը: Հայերն այստեղ են եկել Ֆրանսիայից, Արգենտինայից, Միացյալ Նահանգներից, Անգլիայից, Ռուսաստանից, Լիբանանից, Սիրիայից եւ Հայաստանից: Նրանք ընդգրկված են հանրային կյանքի տարբեր բնագավառներում՝ նորաձեւության, ոսկու առեւտրական, փաստաբանության...

Չինահայերը տարբեր առիթներով հաճախ հավաքվում են երկրի տարբեր քաղաքներում, եւ Չինաստանի աննախընթաց տնտեսական վերելքը առիթ է տալիս ենթադրելու, որ առաջիկա տարիներին հայ համայնքն այստեղ մեծանալու է:

AZG NEW PDF.qxd 20/07/2010 21:06 Page 1

ԱԶԳ **Մարզական**

Ալեքսանդր Ստանուեիչ. «Երեւանում էլ հավատարիմ կմնամ մեր խաղաոճին»

Այսօր «Հանրապետական» մարզադաշտում Հայաստանի չեմպիոն «Փյունիկը» չեմպիոնների լիգայի որակավորման պատասխան խաղում կհյուրընկալի Սերբիայի «Պարտիզանին»: Խաղը կսկսվի ժամը 21-ին: Հիշեցնենք, որ մրցակիցների առաջին հանդիպումն ավարտվել էր «Պարտիզանի» հաղթանակով (3-1): Այնպես որ այսօրվա խաղում փյունիկցիների առջեւ բավական լուրջ խնդիր է դրված: Հաջորդ փուլ դուրս գալու համար «Փյունիկը» պետք է առնվազն 2 գոլ խփի՝ սեփական դարպասն էլ պահելով անառիկ:

«Պարտիզանը» երեկ երեկոյան մարզվեց «Հանրապետականում»: Մինչեւ մարզումը թիմի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Ստանուեիչը հանդիպեց լրագրողներին:

«Հայաստանում մեզ շատ լավ ենք զգում: Առաջին խաղում շատ լավ խաղացինք, ֆուտբոլիստներն իրենց լավ դրսեւորեցին: Կարող էինք ավելի շատ գոլեր խփել, սակայն չստացվեց: Կաշխատենք Երեւանում էլ գոլեր խփել: Պատասխան հանդիպմանն էլ լրջորեն ենք նախապատրաստվել: Այստեղ էլ թիմը հարձակողական ֆուտբոլ է ցուցադրելու: Մենք խաղալու ենք կոշտ ֆուտբոլ, մեզ բնորոշ ոճով, չենք մտածելու պաշտպանության մասին, թեեւ մեծ հարգանքով ենք վերաբերվում մրցակցին», ասուլիսի սկզբում ասաց «Պարտիզանի» գլխավոր մարզիչը: Ալեքսանդր Ստանուեիչին ու նրա սաներին դուր էր եկել «Հանրապետական» մարզադաշտը: Նրա համոզմամբ որակյալ խաղադաշտում ֆուտբոլասերներն ականատես կլինեն գեղեցիկ ֆուտբոլի:

Թեեւ 2 գնդակի առավելությանը, Ստանուեիչը մրցակցության ելքը վճռված չի համարում: Ուստի գլխավոր մարզչի եւ «Պարտիզանի» ֆուտբոլիստների ողջ ուշադրությունն առայժմ բեւեռված է առաջիկա հանդիպման վրա: Նրանք լավ ուսումնասիրել էին «Փյունիկին», ուստի առաջին խաղում մրցակիցը չկարողացավ անակնկալ մատուցել: Սակայն Երեւանում ամեն ինչ հնարավոր է սպասել «Փյունիկից»: Հայ լրագրողների այն դիտարկմանը, թե «Պարտիզանը» սեփական հարկի տակ բավական կոպիտ էր խաղում, ինչը համապատասխան վերաբերմունքի չէր արժանանում մրցավարի կողմից, Ստանուեիչը հետեւյալը պատասխանեց. «Մենք կոշտ պայքար էինք մղում, սակայն կանոնների սահմաններում: Մրցավարի գործողությունները չեմ ցանկանում մեկնաբանել, սակայն նա պարտավոր էր մրցակցի դարպասին 11մ հարված նշանակել»:

Հայկական ֆուտբոլի մասին առաջին պատկերացումը Ստանուեիչը կազմել է Հայաստանի եւ Սերբիայի հավաքականների մրցախաղերի ժամանակ: Ըստ նրա, հայերը եվրոպականին մոտ ֆուտբոլ են ցուցադրում:

«Լիվերպուլն» արդեն սկսել է հետախուզությունը

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, «Ռաբոտնիչկիի» հետ մրցավեճում հաջողության հասնելու դեպքում «Միկան» Եվրոպայի լիգայի որակավորման 3-րդ փուլում պետք է մրցի անգլիական «Լիվերպուլի» հետ: Վերջինիս ղեկավարությունը չսպասելով «Միկա»-«Ռաբոտնիչկի» երեւանյան մրցախաղի արդյունքին, արդեն սկսել է տեղեկություններ հավաքել ապագա մրցակիցների վերաբերյալ:

Այդ նպատակով Երեւան են ժամանել «Լիվերպուլի» ներկայացուցիչները: Նրանք այցելել են «Միկա» մարզադաշտ, ծանոթացել են պայմաններին, հանդիպել են հայկական ակումբի ղեկավարության հետ: Բնականաբար, նրանք ներկա կգտնվեն «Միկա»-«Ռաբոտնիչկի» հանդիպմանը՝ պատկերացում կազմելու ապագա մրցակցի խաղային հնարավորությունների մասին:

Տեղեկացնենք, որ «Լիվերպուլի» ղեկը վերջերս ստանձնել է Ռոյ Հոջսոնը: Նա ժամանակին գլխավորել է Ֆինլանդիայի հավաքականը ու իր սաների հետ եղել է Հայաստանում: Այնպես որ Հոջսոնը հայ ֆուտբոլիստների մասին որոշակի պատկերացում ունի:

Ի դեպ, Ռոյ Հոջսոնը հայտարարել է, որ Եվրոպայի լիգայի որակավորման 3-րդ փուլի հանդիպումներում ստիպված կլինեն խաղալ առանց Սթիվեն Ջերարդի, Ֆեռնանդո Տորեսի եւ Դիրկ Կայտի, որոնք մասնակցել են ֆուտբոլի աշխարհի առաջնությանը: Մարզչական շտաբը գտնում է, որ չպետք է նրանց ծանրաբեռնել, որովհետեւ նոր են սկսել մարզվել: Առայժմ պարզ չէ Ջերարդի եւ Տորեսի հետագա ճակատագիրը: Ակումբի ղեկավարությունը նրանց մինչեւ օգոստոսի 1-ը ժամանակ է տվել վերջնական որոշում կայացնելու: Եթե նրանք մնան թիմում, ապա Հոջսոնը մինչեւ 40 մլն եվրո կարող է ծախսել թիմը համալրելու համար: Հակառակ դեպքում հարկ կլինի ծախսել 100 մլն եվրոյից ավելի:

74 հազար դոլար «Ջաբուլանիի» համար



Ֆուտբոլի աշխարհի առաջնության եզրափակիչ հանդիպման գնդակներից մեկը՝ «Ջաբուլանին» 74 հազար դոլարով վաճառվել է ինտերնետային աճուրդով: Գնդակը գնել են իսպանացի մի խումբ ֆուտբոլասերներ: Աճուրդից ստացված գումարը փոխանցվել է ՁԻԱՀ-ի դեմ պայքարի բարեգործական հիմնադրամին, որի հաշվեհամարն է 46664: Այս թվերը հարավաֆրիկացիների համար գրեթե սրբություն են, քանի որ դրանք ժամանակին Ռոբեն կղզում բանտարկված Նելսոն Մանդելայի անձնական համարն են խորհրդանշում:

Աճուրդին մասնակցելու հայտ էին ներկայացրել 55 երկրներից 133 հոգի: Համեմատության համար նշենք, որ 2004-ին Պորտուգալիայում կայացած ֆուտբոլի Եվրոպայի առաջնության «Ռոտեյրո» գնդակը վաճառվեց մոտ 43 հազար դոլարով: Այդ գնդակով քառորդ եզրափակիչում խաղացել էին Պորտուգալիայի եւ Անգլիայի հավաքականները: Վերջինիս կազմում էր Դեւիդ Բեքհեմը:

ՖԻՖԱ-ն պարգեւատրեց առաջնության մասնակիցներին

Ֆուտբոլի աշխարհի չեմպիոն Իսպանիայի հավաքականը ՖԻՖԱ-ից 23,7 մլն եվրո կստանա մրցաշարում հաղթելու համար: 2-րդ տեղը գրաված Հոլանդիայի ընտրանին կպարգեւատրվի 19 մլն եվրոյով: 16-ական մլն եվրո կստանան 3-րդ տեղի համար մրցավեճի մասնակիցներ Գերմանիայի եւ Ուրուգվայի հավաքականները: Քառորդ եզրափակիչ մտնելու համար Գանայի, Պարագվայի, Արգենտինայի եւ Բրազիլիայի հավաքականները կպարգեւատրվեն 14,2 մլն եվրոյով:

Հոբելյանական հուշադրամներ

Իսպանիայում մտադիր են ֆուտբոլի աշխարհի առաջնությունում հաղթելու կապակցությամբ հուշադրամներ թողարկել: 10 եվրոյանոց հուշադրամի վրա պատկերված կլինեն դարպասապահի ձեռքերը, որը փորձում է որսալ գնդակը: Այն կարժենա 44 եվրո: 20 եվրոյանոց հուշադրամի վրա կլինի շարժվող ֆուտբոլիստի դիմապատկերը: Այն կարժենա 65 եվրո: Հուշադրամների դիմերեսին պատկերված կլինի Իսպանիայի թագավոր Խուան Կառլոս 1-ի դիմապատկերը: Իսկ հետեւի երեսին գրված կլինի «ՀԱՀ-ի 2010-ի աշխարհի առաջնության հաղթողներ»: Հուշադրամները կթողարկվեն 40 հազար տպաքանակով:

«Բարսելոնը» ներկայացրեց Ադրիանոյին

Իսպանական «Բարսելոնը» պաշտոնապես ներկայացրել է իր նորեկին՝ կիսապաշտպան Ադրիանոյին: Վերջինս ակումբի հետ քառամյա պայմանագիր է կնքել: Ֆուտբոլիստի տրանսֆերային գինը 90 մլն եվրո է սահմանվել:

«Տեղափոխվել եմ աշխարհի լավագույն ակումբ: Ինձ իսկապես երջանիկ եմ զգում: Կփորձեմ ողջ ուժերով խաղալ այնտեղ, որտեղ որ նոպատակահարմար կգտնի մարզիչը», նշել է Ադրիանոն:

ՇԱԽՄԱՏ

Փաշիկյանն առաջինն է լրացուցիչ գործակիցներով

Մարտունիում ավարտվեց շախմատային ակադեմիայի կազմակերպած «Սեւանա լիճ» ավանդական մրցաշարը: Առավել հաջող հանդես եկան փորձառու գրոսմայստերներ Արման Փաշիկյանն ու Տիգրան Պետրոսյանը, որոնք 9 հնարավորից վաստակեցին 6-ական միավոր: Ավարտական տուրում Պետրոսյանը հաղթեց Ռոբերտ Հովհաննիսյանին, իսկ Փաշիկյանը հաշտություն կնքեց Վրաստանը ներկայացնող Դավիթ Հարությունյանի հետ:

Հաղթողին որոշելու համար հարկ եղավ դիմել լրացուցիչ գործակիցների օգնությանը: Հաջողությունն ուղեկցեց Արման Փաշիկյանին, որը ճանաչվեց մրցաշարի հաղթող: 3-րդ տեղը գրավեց 5 միավոր վաստակած ռուսաստանցի Մախիմ Մաշլակովը, որը վերջին տուրում ոչ-ոքի խաղաց Ավետիք Գրիգորյանի հետ: Սամվել Տեր-Սահակյանը հաղթեց Պավել Պոնկրատովին, Լուկա Լենիչը պարտության մատնեց հնդիկ շախմատիստ Նարայան Գոպալին:

Մյուս մասնակիցների ցուցանիշներն այսպիսին են. 4-5. Լենիչ, Տեր-Սահակյան՝ 4,5-ական, 6-8. Գոպալ, Հարությունյան, Գրիգորյան՝ 4-ական, 9-10. Հովհաննիսյան, Պոնկրատով՝ 3,5-ական:

Սարգսյանը հաղթեց առաջատարին

Հունաստանում ընթացող շախմատի մրցաշարի 8-րդ տուրում մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Գաբրիել Սարգսյանի մրցավեճը միանձնյա առաջատար Եվգենի Պոստնիի հետ: Հայ գրոսմայստերը իրեն հիանալի դրսեւորեց ու անչափ կարեւոր հաղթանակ տոնեց: Այդ հաջողության շնորհիվ Գաբրիելը մրցաշարի ավարտից մեկ տուր առաջ վաստակեց 6,5 միավոր եւ գլխավոր մրցանակը շահելու լուրջ հայտ ներկայացրեց: Սարգսյանի հետ աղյուսակը գլխավորում են Բելա Խոթենաշվիլին եւ Միշեա Պարլիգասը:

Խոթենաշվիլին սեւերով հաղթեց Մախիմ Տուրովին, Պարլիգասը պարտության մատնեց Ֆաբրիցիո Բելլիային: 11 շախմատիստներ վաստակել են 6-ական միավոր:

Միեր Հովհաննիսյանը 8-րդ տուրում ոչ-ոքի խաղաց Սթեֆ Սոորսի հետ: Նա 5 միավորով 38-րդ տեղում է: Ավարտական տուրում Գաբրիել Սարգսյանը սեւերով կխաղա Բելա Խոթենաշվիլու հետ: Միշեա Պարլիգասի մրցակիցը կլինի Դավիթ Ալբերտոն:

Տաթեւ Աբրահամյանը բրոնզե մրցանակակիր

ՖԻԴԵ-ի վարպետ Տաթեւ Աբրահամյանին չհաջողվեց նվաճել շախմատի ԱՄՆ-ի կանանց առաջնության չեմպիոնուհու տիտղոսը: Թեեւ ավարտական տուրում նա հաղթեց իր հայրենակցուհի Կատերինա Ռոհոնյանին, սակայն դա բավարար չէր ընդհանուր հաջողության համար: Աղյուսակը գլխավորող Իրինա Կրուզը ձեռքից բաց չթողեց հերթական անգամ ԱՄՆ-ի չեմպիոնուհու տիտղոսը նվաճելու հնարավորությունը: Նրա համար դժվար չէր հաղթել մրցաշարի հեռնարպահ Աբի Մարշալին ու վաստակելով 8 միավոր, գրավել առաջին տեղը:

Տաթեւ Աբրահամյանը Աննա Զատոնսկիխի հետ վաստակեց 7,5 միավոր: Զատոնսկիխը հաշտություն կնքեց Ֆրանչեսկա Ֆոյսորի հետ: Լրացուցիչ գործակիցներով Տաթեւը դարձավ 3-րդ մրցանակակիր: Նա արդեն 3-րդ անգամ է նման հաջողության հասնում: Չնայած պարտությանը, Կատերինա Ռոհոնյանը 4,5 միավորով զբաղեցրեց 4-րդ տեղը:

Նույնքան միավորով 5-րդ տեղում է Ալիսա Մելեխինան, որին հաջորդում են Իրինա Զենյուկը, Կամիլա Բագինսկայթեն՝ 4-ական, Ֆրանչեսկա Ֆոսյորը՝ 3, Բեաթրիս Մարինելոն՝ 1,5 եւ Աբի Մարշալը՝ 0,5:

Եվս 2 ուղեգիր ՄՕԿ-ից

ՄՕԿ-ը եւս 2 ուղեգիր է տրամադրել Հայաստանի պատանի մարզիկներին օգոստոսին Սինգապուրում կայանալիք օլիմպիական պատանեկան ամառային առաջին խաղերին մասնակցելու համար: Այդ պատվին արժանացել են լողորդներ Անահիտ Բարսեղյանը (50 եւ 100 մետր թիկնալող) եւ Սերգեյ Պեվնեւը (50 եւ 100 մետր ազատ լողաոճ):

Այսպիսով, Սինգապուրի օլիմպիադայի մասնակից հայ մարզիկների թիվը հասավ 14-ի: Բացառված չէ, որ մինչեւ խաղերի մեկնարկը (օգոստոսի 14-ը) ՄՕԿ-ը եւս մի քանի ուղեգիր տրամադրի հայ մարզիկներին:

Խաղը կկայանա հուլիսի 25-ին

Ինչպես հայտնի է, Եվրոպայի լիգայի մրցաշարին մասնակցելու պատճառով ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 14-րդ տուրի «Շիրակ»-«Բանանց» հանդիպումը հետաձգվել էր: Այդ խաղը կկայանա հուլիսի 25-ին Գյումրիի քաղաքային մարզադաշտում:

Մարտինոն կշարունակի մարզել պարագվայցիներին

Թեեւ Հերարդո Մարտինոն հայտարարել էր Պարագվայի հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնից հրաժարական տալու մասին, սակայն նա կշարունակի աշխատանքը նվազագույնը մինչեւ 2011-ի Ամերիկայի գավաթի խաղարկության ավարտը: Այդ մրցաշարը կայանալու է 2011-ի հուլիսի 3-24-ը Արգենտինայում:

Օրերս Մարտինոն հայտարարել է, որ պատրաստ է շարունակել աշխատանքը: Հավանաբար դրա համար հիմք է հանդիսացել Պարագվայի նախագահ Ֆեռնանդո Լուգոյի եւ ֆուտբոլասերների կարծիքը, որոնք գոհ են հավաքականի ելույթներից: Հիշեցնենք, որ աշխարհի առաջնությունների պատմության մեջ առաջին անգամ պարագվայցիները մտան քառորդ եզրափակիչ:

Մարտինոն ծնունդով Արգենտինայից է: 2003-ին նրան ճանաչել են արգենտինական «Նյուելս Օլդ Բոյզ» ակումբի ամենահռչակավոր ֆուտբոլիստներից մեկը: Թիմի կազմում նա 505 խաղ է անցկացրել: Մարզչական գործունեությունը նա սկսել է 1998-ին: Պարագվայական «Լիբերտադ» եւ «Սերո Պորտենյո» թիմերին Մարտինոն չեմպիոնական բարձունքի է հասցրել: Պարագվայի հավաքականի ղեկը նա ստանձնել է 2007-ին: Նույն տարում նա ճանաչվեց Հարավային Ամերիկայի լավագույն մարզիչ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 20/07/2010 22:02 Page 1

ԱԶԳ **Օրվա հետքերով**

ԵԱՀԿ Մինսկի խումբը հավասարության նշան է դնում հայկական եւ ադրբեջանական կողմերի միջեւ

1-ին էջից

Ըստ երեւույթին, այդման մեծ է ղարաբաղյան հակամարտության հավասարակշռված լուծման հեռանկարի նկատմամբ Մինսկի խմբի համանախագահող երկրների հոգատարությունը, որ նրանք այդ հեռանկարը չմթագնելու հոգատարությամբ կողմերից մեկին զգուշացնելիս հասցեատիրոջ անուն չեն նշում: Այսպիսով, յուրաքանչյուր կողմ յուրովի է մեկնաբանում այդ զգուշացումը, դա դրանով թեեւ իմաստազրկվում է, սակայն միաժամանակ պատճառ է դառնում, որ հավասարության նշան դրվի կողմերի միջեւ:

Սակայն երբ խոսքը վերաբերում է «ավելի փոխզիջող» լինելուն, ինչպես նաեւ հետագա քաղաքական երկխոսության ու համաձայնության համար պայմաններ ստեղծելու եւ 1994 թ. հրադադարը վերահաստատելու կոչերին, ապա համանախագահող երկրներն արդեն չեն զլանում երկու կողմին էլ որպես հասցեատիրոջ ներկայացնելու պարտականությունից: Ինչո՞ւ, որովհետեւ նրանք համոզված են, որ բացարձակապես չի մթագնի «հակամարտության հավասարակշռված լուծման հեռանկարը», ոչ էլ կխախտի կողմերի հավասարությունը:

Որքան էլ համանախագահող երկրներին հաճելի չլինի, նրանց հիշեցնենք, որ հայկական եւ ադրբեջանական կողմերի միջեւ հավասարություն ի սկզբանե չի եղել, որովհետեւ դա լկտիաբար խախտել է Ադրբեջանը, սանձազերծելով անհավասար պատերազմ Լեռնային Ղարաբաղի հայության դեմ: Ղարաբաղում բնակվող ադրբեջանցիները, որոնց փախստական են անվանում, մինչեւ կոկորդը թաղված են արցախահայերի արյան մեջ, այսինքն՝ ստոր մարդասպաններ են: Պարզապես արժանի հակահարված են ստացել եւ ստիպված դադարեցրել են իրենց հայասպան գործունեությունը:

Նախքան Լեռնային Ղարաբաղի դեմ պատերազմական գործողությունների անցնելը, ադրբեջանական ռազմակները Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում մարդաորս են կազմակերպել հայերի դեմ, որ տանջամահ անեն, ծնողների աչքի առջեւ կամ փողոցում հրապարակավ բռնաբարել են հայ կանանց եւ աղջիկներին, ապա կոկորդը կտրել եւ պատշգամբից ներքեւ շպրտել կամ էլ խարույքի վրա կենդանի ողջակիզել են՝ յուրացնելով բոլորի բնակարանները՝ ունեցվածքով հանդերձ:

Ընդ որում՝ հայ լինելու համար մարդկանց ամենադաժան ձեւերով սպանող, ողջակիզող այս մարդասպաններին «ադրբեջանական» ժողովուրդ կոչված երեսնի թաքարը շարունակում է առ այսօր փառաբանել, հորջորջելով «սումգայիթյան հերոսներ»:

Թեեւ այս «հերոսները», որոնց շարքերը համալրված էին աֆղան, չեչեն, ուկրաինացի վարձկաններով եւ թուրք կամավորներով, հայ զինվոր տեսնելուն պես պոչաս բորենու կերպարանք են ընդունել եւ զենքը շպրտելով փախել են ռազմի դաշտից, սակայն նույն նկատառումով «ազգային հերոս» է հռչակվել Ռամիլ Սաֆարով կոչված մարդասպան սահակը եւ այս սահակի մասին Եվրոխորհրդում ակնածանքով են արտահայտվել ադրբեջանցի խորհրդարանականները, առանց քաղաքակիրթ եվրոպացիների առարկության:

ԵԱՀԿ Մինսկի խմբի այդ ո՞ր շնորհի համար հայկական կողմը պիտի հավասարվի Ադրբեջանին եւ ինչպե՞ս, երբ հայերն ունեն ադրբեջանական ռոմակների ձեռքով արյունահամ եղած, իսկ ադրբեջանցիները՝ մինչեւ կոկորդը հայի արյան մեջ թաղված փախստականներ: Ինչո՞ւ հավասարվել, երբ արցախահայությունը ազգային-ազատագրական պատերազմում խայտառակ պարտության է մատնել ադրբեջանցի մարդասպանին: Կամ ի՞նչ քաղաքական երկխոսություն եւ ո՞ւմ հետ: Սումգայիթում հայերի կոտորածն ամենադաժան ձեւերով իրականացնող մարդասպան հրոսակներին «սումգայիթյան հերոսներ» հռչակող «ադրբեջանական» ժողովուրդ կոչված ռոմակների՞, թե՞ իր իսկ սանձազերծած պատերազմում կրած խայտառակ պարտությունից հետո անտեսաբար ռազմատենչ հայտարարություններ անող, իր իսկ խնդրանքով ստորագրված զինադադարը անընդմեջ անամոթաբար խախտող, օկուպացրած լինելով խորհրդային բանակի օգնությամբ Լեռնային Ղարաբաղի Շահումյան, Գետաշեն եւ Մարտունաշեն շրջանները՝ առանց ամաչելու հայկական օկուպացիայի մասին ի լուր աշխարհի վայնասուն բարձրացնող ադրբեջանական իշխանությունների հետ, որոնց ներկայացուցիչներն էլ Եվրոխորհրդարանում ազգային հերոս են հռչակել Ռամիլ Սաֆարով մարդասպանին:

Կա՛մ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները չգիտեն այս ամենի մասին, կա՛մ չիմացողի տեղն են դնում իրենց: Համենայն դեպս, մենք չենք բացառում, որ մոռացել են, այդ իսկ պատճառով էլ հարկ համարեցինք թարմացնել նրանց պայծառ ուղեղը:

Մեթյու Բրայզայի թեկնածության քննարկումը՝ հուլիսի 22-ին

Իսկ մինչ այդ՝ Ֆրենսիս Ռիկարդոնե

1-ին էջից

Եվս մեկ թեկնածություն արդեն իսկ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում քննարկման հարց է դարձել երեկ: ԱՄՆ-ի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը երեկ ուշ երեկոյան պիտի սկսեր Թուրքիայում Միացյալ Նահանգների նոր դեսպանի նշանակման հարցի քննարկումը: Հայ լոբբիստները հարցեր են պատրաստել դեսպանի թեկնածուին ուղղելու համար:

Հուլիսի սկզբին ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Թուրքիայում Միացյալ Նահանգների նոր դեսպանի պաշտոնում առաջադրել էր Ֆրենսիս Ռիկարդոնեի թեկնածությունը: Ֆրենսիս Ռիկարդոնեն ներկայումս Աֆղանստանում ԱՄՆ-ի դեսպանի տեղակալն է: Նախկինում որպես դեսպան աշխատել է նաեւ Եգիպտոսում, Ֆիլիպիններում: Որպես դիվանագետ Ռիկարդոնեն երկու անգամ եղել է Թուրքիայում դիվանագիտական առաքելություն իրականացնողի փոխարինող: Խոսում է թուրքերեն եւ այլ լեզուներով: Թեկնածությունը հաստատվելու դեպքում Ռիկարդոնեն կփոխարինի այժմ Թուրքիայում ԱՄՆ դեսպան Ջեյմս Ջեֆրիսին, որի թեկնածությունն ԱՄՆ նախագահը առաջադրել է Իրանում ԱՄՆ դեսպանի պաշտոնում:

Վաշինգտոնի Հայ դատի գրասենյակի մամուլի պատասխանատու **Էլիզաբեթ Չուլջյանը** «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցում արտահայտվում հարաբերությունների հանձնաժողովում երեկ կայանալիք քննարկումը կարեւոր առիթ համարեց հստակեցնելու ինչպես Թուրքիայի նկատմամբ ամերիկյան վարչակազմի այսօրվա դիրքորոշումը, այնպես էլ դեսպանի թեկնածուի վերաբերմունքը Հայաստանին առնչվող խնդիրների Հայոց ցեղասպանության, Հայաստանի շրջափակման եւ հայ-թուրքական ձախողված արձանագրությունների վերաբերյալ:

Առաջիկա քննարկման առիթով հայտարարություն է տարածել նաեւ Ամերիկայի հայկական համագումարը: «Համագումարն ակնկալում է, որ առաջադրված Ռիկարդոնեն առնվազն կհորդորի Թուրքիային՝ վերջ դնել մերժման քաղաքականությանը եւ հաշտվել ցեղասպանության իր ժառանգության հետ», հայտարարել է Ամերիկայի հայկական համագումարի գործադիր տնօրեն **Բրայան Արդունին**:

Համագումարը, ըստ Արդունիի, նաեւ ապագա դեսպանից ակնկալում է ճնշում գործադրել, որպեսզի «Թուրքիան դադարեցնի Հայաստանի՝ շուրջ 2 տասնամյակ շարունակվող շրջափակումը, եւ իրականացնի Հայաստանի հետ հարաբերություններն առանց նախապայմանների կարգավորելու միջազգային պարտավորությունները»: «Լավ կլինի, որ դեսպան Ռիկարդոնեն հետեւի դեսպան Հենրի Մորգենթաուի ավանդույթներին եւ առաջ տանի Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության հետեւանքների ընդունման գործընթացը», նշված է Ամերիկայի հայկական համագումարի հայտարարությունում:

ՕԱՆՈՒՑՈՒՄ

«Նոյյան տապան» Մեդիա միավորումը հայտարարում է

«Լրագրության եւ մեդիա ոլորտի այլ մասնագիտություններով աշխատողների բարձրագույն որակավորման դասընթացների» ընդունելություն:

Ընդունելությունն անցկացվում է հետեւյալ մասնագիտությունների գծով.

Լրագրող, այդ թվում տպագիր մամուլի, հեռուստա-, ռադիո- եւ on-line լրագրող, խմբագիր, թարգմանիչ, հեռուստաօպերատոր եւ մոնտաժող, հեռուստահաղորդավար, գովազդային մենեջեր եւ PR գծով մասնագետ, մեդիա մենեջեր:

Հայտերն ընդունվում են հուլիսի 20-ից: Ուսուցումը վճարովի է: Ուսման ժամկետը՝ 6 ամիս:

Դասընթացներն ավարտողները կստանան համապատասխան վկայականներ:

Հասցե. Երեւան, Իսահակյան 28, էլ.փոստ՝info@nt.am, հեռ.՝ 565965, 524279:

Պահանջվում է

Արաբերենի մասնագետ, նաեւ անգլերենի ու ռուսերենի իմացությամբ՝ Սաուդյան Արաբիայում խոշոր ընկերության տնօրենի օգնական աշխատելու համար: Աշխատանքային փորձը պարտադիր է:

Դիմել masis71@mail.ru էլեկտրոնային հասցեով կամ զանգել 093 437410 հեռախոսահամարով:

Ռիելթոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<Ակսոն>> ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է <<Ամերիաբանկ>> ՓԲԸ -ին սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- Բնակելի տուն, ընդ. մակերեսը՝ 162,8 քմ, հողը 0,01777 հա: Հասցե՝ ք. Եր ան, Սարի-թաղ 5 փող., թիվ 3 տուն: Մեկնարկային գինը՝ 15000000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետ հոլանդական եղանակներով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 23.08.2010թ-ից մինչ 30.12.2010թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուրաքանչյուր օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-45-13 կամ այցելել **www.akson.am**:

Հառիճավանքի հոգեւոր դպրանոցը հայտարարում է 2010-2011 ուս. տարվա ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ առաջիկա ամիսներին կսկսի գործել Հայաստանի երրորդ հոգեւոր ուսումնական հաստատությունը՝ Հառիճավանքի հոգեւոր դպրանոցը:

Հառիճավանքի հոգեւոր դպրանոցը հայտարարում է ընդունելություն 2010-2011 ուս. տարվա համար: Հառիճավանքի հոգեւոր դպրանոց կարող են ընդունվել ՀՀ եւ այլ երկրների մինչեւ 21 տարեկան քաղաքացիներ, որոնք ունեն միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթություն եւ զավակն են Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ որոնք հաջողությամբ կհանձնեն ընդունելության քննություններ հետեւյալ առարկաներից.

1. Հայոց լեզու (գրավոր, հարցարան),
2. Հայ գրականություն (բանավոր),
3. Հայոց պատմություն (բանավոր),
4. Երաժշտություն (երգեցողություն, լսողական ընդունակություն, ռիթմի զգացողություն),
5. Օտար լեզու (անգլերեն՝ ստուգարք):

Նախքան քննությունները դիմորդները տեսչության հետ ճանաչողական բնույթի զրույց կունենան հետեւյալ նյութերի շուրջ.

1. Սուրբ Գրքի իմացություն,
2. Հայ Եկեղեցու պատմության մասին գիտելիքներ,
3. Եկեղեցական փորձառություն,
4. Ինքնարտահայտվելու կարողություն:

Դիմումները եւ ներքոհիշյալ փաստաթղթերը պետք է անձամբ ներկայացնել Գեւորգյան հոգեւոր ճեմարանի քարտուղարություն՝

1. Դիմում
2. Միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթության վկայական
3. Բնութագիր (դպրոցի տնօրենից)
4. Զինվորական դրության մասին փաստաթուղթ (բնօրինակը)
5. Բժշկական վավերացման տեղեկանք (086 ձեւ)
6. Երկու լուսանկար 3 X 4 չափի
7. Անձնագրի պատճեն
8. Ինքնակենսագրություն
9. Երաշխավորագիր թեմի առաջնորդից կամ շրջանի հոգեւոր հովվից
10. Տեղեկանք բնակավայրից
11. Մկրտության վկայական

Դիմումներն ընդունվում են ամեն օր, բացի կիրակիից, հուլիսի 20-ից մինչեւ օգոստոսի 21-ը, ժամը 10:00-16:00 (շաբաթ օրը մինչեւ ժամը 13:00):

Հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գեւորգյան հոգեւոր ճեմարան (հեռախոս /010/ 517-185, /010/ 517-180):

Մայր Աթոռ Ս. Էջմիածին Տեղեկատվական Համակարգ

Հայտարարություն

Սույն թվականի հուլիսի 22-ին, ժամը 12:00 ին տեղի կունենա ՀՀ Կոտայքի մարզի Զովունի համայնքի 1-ին փող. 157 հասցեում նախատեսվող «Թամարա եւ Անի» ՍՊԸ-ին պատկանող գյուղատնտեսական մթերքների վերամշակման եւ զովացուցիչ ըմպելիքների արտադրական ձեռնարկության նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-15-68:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 20.07.2010, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: